№ 72 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 4

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 4 72 №

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ“

Գրական, հասարակական և քաղաքական
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ.
Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ծաղկավաճեան փողոց, տ. № 12) և «Գուտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլովինսկի պրօսպ. Թատր. դիմաց)։ Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»։

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամէն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., 1/2 եր. 5 ր., 1/4 եր. 2 ր., տողատեղ (կորպուս) 40 կ.։

18—0

Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ց. Վ. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի.. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգշ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻԿՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։
ԿՈՒՑԵՎ.—Ջղային, երեքշ, հինգշ. շաբ. 12—1 ժ.
ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 12—1 ժ.
ԽՈՒՍԵԼԻԱՆԻ.—Կանացի, երկուշ., չոր., ուրբ., կիր. 11—12 ժամ։
ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ, հինգշ, շաբ., 4—5 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., ամեն օր, բացի կիր. օրերից 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԻՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԲՑՕՎԱ.—Մասսաժ. ամեն օր 11—5 ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 1—2 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։
ԽՐՄՕԼԱԵՎ.—Ներք. երեխ. ամեն օր 11—12 ժ.։
ԿՈՒՑԵՎ.—Ջղային. երեքշ. հինգշ. կիր. 12—1 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (Հ. ու.) 82—144

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՄԱՍՆԱԳԷՏ
սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։
Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։
(ա. օ.) առ. 33—50

№ 20 ՀԱՅԵԼԻ № 20

Լոյս կը տեսնէ ուրբաթ, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին

№ 4 պրեմիա № 4

Հայոց Հայրիկ

Պրեմիան համարի հետ արժէ 30 կ.։ Լրագրավաճառները մի-մի օրինակ ստանում են ՁՐԻ։

(Հ. Կ.) առ 1—2

Կիրակի ապրիլի 8-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Փիլ. դոկ. Ս. Թառայեանը
կը դասախօսէ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ
Փիլիսօփայութիւնը
ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Գեղարուեստի հոգեբանական հիմունքները, 2. Զգացմունք ու միտք, 3. Գիտութեան էութիւնը, 4. Գեղարուեստի էութիւնը, 5. Գիտութեան նշանաբանը, 6. Գեղարուեստի նշանաբանը, 7. Գեղարուեստի ճիշդաւորութիւնը, 8. Գիտութեան ազդեցութիւնը գեղարուեստի վրա, 9. Ճշմարտութեան ու գեղեցկութեան համերաշխութիւնը, 10. Գեղարուեստի բարդ տեսակները, 11, Բոլոր գեղեցիկ արուեստների դաշինքը, 12. Ճշմարիտ գեղեցկութեան սրբավայրը, 13. Թատրոնի ծագումը, 14. Թատրոնի զարգացման պատմութիւնը, 15, Ժամանակակից թատրոնը, 16. Ապագայ գեղարուեստը ու մասնաւորապէս թատրոնը։

Սկիզբն է ժամի 12-ին

Մուտքի գինը 20-ից մինչև 50 կոպէկ

Տոմսակները կարելի է վաղօրօք ստանալ 1) «Ընկեր»-ի խմբագրատանը, 2) «Փարոս» գրախանութում, Երևանեան հրապարակ, 3) Միրզաբէգեանցների խանութում Արմեանսկի բազար, Իսկ դասախօսութեան օրը ժողովարանի մուտքի մօտ։

(ա. օ.) առ. 2—6

ԲԺԻՇԿ
Տ. Ա. Խախխանեան
ՄԱՍՆԱԳԷՏ
ներքին եւ վեներական հիւանդութիւնների
Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։
առ. (Հ.ու.գ.) 59—100

ԲԺԻՇԿ
Գ. Պապովեան
ՄԱՍՆԱԳԷՏ
քթի, կոկորդի եւ ականջի հիւանդութիւնների
Ընդունում է { ցեր. 1—3 ժ. ամեն օր բա- / երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ
Միխայլովսկի պրօսպ., տ. Ֆորբերի № 11.
(Կ. Հ.) առ. 31—60

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան խնդիրները Պետական Դումայում. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Սովը Ապարանում. Օրվայ խնդիրներ. Թատրոն և երաժշտութիւն. Նորաշէնի եկեղեցու ծխական ժողովի առիթով. Թիֆլիսի պատգամաւոր Զօհրաբեանի ճառը. Նամակ Գանձակից. Տեղեկութիւններից գաւառից. Պետական Դումա. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվէյցարիայից.. Նամակներ Պարսկաստանից. Կանանց քուէի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

I

Մեր ընթերցողները մի առանձին հետաքրքրութեամբ կը կարդան այսօրվայ այն հեռագիրները, որոնք վերաբերում են կովկասեան հարցերին Պետական Դումայում։

Թէ կովկասեան պատգամաւոր Յ. Աթաբէգեանի և թէ Հեռագրական Գործակալութեան հաղորդագրութիւններից կը տեսնեն մեր ընթերցողները, որ ժողովրդական ազատութեան կուսակցութեան 30 անդամ ներկայացրել են Պետական Դումային մի հարցապնդում ուղղ[illegible] կովկասեան բարենորոգումների մասին։

Այդ հարցապնդման մէջ ծրագրված են վարչական, դատական, կրթական և հողային մի քանի խոշոր հարցեր։

Հարցապնդման կամ յայտագրի մէջ ուրուագծված են անփոփ կերպով և այն ոգին կամ ուղղութիւնը, որոնցով ցանկալի է համարվում առաջ տանել Կովկասում բարենորոգումները։

Այդ հարցապնդումով կովկասեան խնդիրների քննութեան սկզբնաւորութիւնն է դրվում Պետական Դումայում և առաջ է մղվում այդ խնդիրների մանրամասն ուսումնասիրութեան և հոգատարութեան խոշոր հարցը։

II

Վարչական-հասարակական խնդիրների շարքում նորից հանդէս է գալիս տեղական ինքնավարութեան կամ զէմստվօյի հարցը։

Տեղական ինքնավարութեան հարցը հերթական է և նրա իրագործութիւնը չէ կարելի յետաձգել։ Զեմստվօյի բացակայութեան պատճառով շատ անմխիթարական վիճակի մէջ է ամբողջ վարչական-հասարակական գործունէութիւնը գաւառներում։

Տեղական ինքնավարութեան մարմինները պէտք է միացած լինեն մի ընդհանուր կենտրոնական ներկայացուցչութեամբ, որը իբրև պատգամաւորների կենտրոնական խորհրդակցութիւն պէտք է գործէ այժմեան Փոխարքայի խորհրդի փոխարէն։

Տեղական ինքնավարութիւն մտցնելուց յետոյ նահանգական և գաւառական վարչութիւններին կը մնայ զուտ ադմինիստրատիւական գործունէութիւն, որը պէտք է ենթարկվի այն բարեփոխութիւններին, որոնք մշակված են կենտրոնական Ռուսաստանի համար։

Նոյնպէս պէտք է բարեփոխվի և «զեմսկի ստրաժնիկ» կոչված պահակախմբերի դրութիւնը, որոնց գոյութիւնը շատ թանգ է նստում մեր երկրին, առանց օգուտ բերելու ժողովրդին և նոյն իսկ յաճախ ի վնաս ազգաբնակութեան շահերի։

III

Դատական գործը Կովկասում թէև ենթարկվել է մասամբ այն բարենորոգչական ոգուն, որը ներշնչել էին Ալէքսանդր երկրորդի ռեֆորմները, բայց շատ բարեփոխութիւններ դեռ չեն մտցրված մեր երկրում և մեր ժողովրդական ներկայացուցչութիւնը դեր չէ կատարում դատական գործի կազմակերպութեան մէջ։

Միևնոյն ժամանակ մի քանի տեղերում շարունակվում է զինւորական վարչութիւն, ինչպէս օրինակ Կարսի և Բաթումի նահանգներում, որոնք, չը նայելով այն հանգամանքին, որ երեսուն տարի է ինչ միացրած են Ռուսաստանին, դեռ կառավարվում են զինւորական վարչութեան կարգով։

Դատարանը, որ պէտք է մատչելի լինի հասարակ ժողովրդին, չէ կարող իր բարոյական կոչումը արժանաւորապէս կատարել, եթէ նա չի մօտենայ ժողովրդին նրա մայրենի լեզուով և հնարաւորութիւն չի տայ, որ դատական սանդուխքի ցածր աստիճաններում դատավարութիւնը կատարվի տեղական լեզուներով։

Լեզուի հարցը նոյնպէս կարևոր է կրթական հաստատութիւնների մէջ թէ իբրև օժանդակ մանկավարժական միջոց և թէ իբրև ինքնուրոյն առարկայ, որի ուսումնասիրութիւնը պէտք է կատարվի բարեխղճօրէն։

IV

Ինչ վերաբերում է հողային խնդիրներին՝ նրանց նշանակութիւնը խոշոր է Անդրկովկասի համար։

Այստեղ դեռ չեն վերջացած ճորտատիրական կարգերը, դեռ չեն չափված ու դասաւորված հողերը և շարունակվում են գոյութիւն պահպանել այնպիսի հողային կարգեր, որոնք բոլորովին անհանդուրժելի պէտք է լինէին ներկայ ժամանակում։

Միևնոյն ժամանակ սուր կերպարանք է ստանում երկրի մէջ հողի սակաւութիւնը, մինչդեռ երկրի մէջ եղած ազատ հողերն էլ խլվում են տեղական ժողովրդից և յատկացվում կենտրոնական նահանգներից եկած գաղթականներին։

Հողային և վարչական խնդիրների հետ կապ ունի և ջրաբաշխութեան հարցը, որը նոյնպէս վաղուց կարօտ է նոր օրէնսդրական բարեփոխութիւնների։ Այդ հարցը, ինչպէս յայտնի է, ներկայումս մանրամասն ուսումնասիրութեան առարկայ է Թիֆլիսում յատուկ յանձնաժողովի ձեռքով։

Սրանք են կովկասեան այն խնդիրները, որոնք շօշափված են այն յայտագրի մէջ, որ տուել են 30 պատգամաւորները Պետական Դումային։

Քայլը կարևոր է. Մնում է, որ նրան համապատասխանէր և բաւարարութիւն տալու հնարաւորութիւնը։

Ա. Քալանթար

ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ, ապրիլի 3-ին խմբագրութիւնս ստացաւ հետևեալ հեռագիրը Պետերբուրգից.

Այսօր, ապրիլի 2-ին ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամների ստորագրութեամբ Պետական Դուման մտցրվեց մի յայտարարութիւն, որ ուղղված է մինիստրների խորհրդի նախագահին, որով խնդրվում է 40-րդ յօդուածի կարգով բացատրութիւն տալ՝ թէ արդեօք Կովկասի Փոխարքան մտադրութիւն ունի, և երբ, Դումա մտցնել զեմստվային ինքնավարութեան, Փոխարքային կից կազմված խորհուրդը ազգաբնակութեան ընտրեալների ժողովով փոխարինելու, զէմստվային պահակախումբը (стража), գաւառական վարչութիւնը, տեղական դատարանը, շինական կառավարութիւնը վերակազմելու, զինւորա-ժողովրդական վարչութիւնը վերացնելու, գաղթականութիւնը դադարեցնելու, տեղական հողազուրկ և հողասակաւ գիւղացիներին նադէլնի հողեր բաժանելու և գիւղացիների պարտադիր կախումը կալուածատէրերից բարձելու նախագիծ։

Դումայի անդամ՝ Աթաբէգեան

—

Պետական Դումայի կանոնադրութեան 40-րդ յօդուածի կարգով Դումայի 30 անդամների ներկայացրած յայտարարութեան բնագիրը.

«Դումայի քննութեան համար ներկայացրած է տեղական դատարանը վերակազմելու արդարադատութեան մինիստրի յայտագիրը։ Այդ վերակազմութիւնը չէ տարածվում և չէ էլ կարող տարածվել Կովկասեան երկրի վրա, որովհետև այնտեղ զեմստվային հաստատութիւններ գոյութիւն չունեն։ Այդ իսկ պատճառով էլ Կովկասի վրա չեն տարածվի ոչ մատակարարական գործը ժողովրդի ձեռքը յանձնելու օրէնքը, ոչ ընդհանուր ուսման օրէնքը։ Ուստի մենք, ստորև ստորագրվող Դումայի անդամներս, խնդրում ենք մինիստրների խորհրդի նախագահից բացատրութիւն տալ՝ թէ արդեօք Կովկասի Փոխարքան մտադիր է Դումային ներկայացնել փոխարքայութեան սահմաններում զեմստվային հաստատութիւններ մտցնելու առաջարկագիր, և, արդեօք, մօտաւորապէս երբ կը ներկայացվի այդօրինակ առաջարկագիր։ Ապա ցանկալի կը լինէր բացատրութիւն ստանալ, մշակում է արդեօք կառավարութիւնը և մտադիր էլ է Դումա մտցնել նոյնօրինակ առաջարկութիւն՝ Կովկասի Փոխարքայի ներկայ խորհուրդը ազգաբնակութեան ընտրեալների բաղկացած խորհրդակցութեամբ փոխարինելու, գաւառական գաւառամասային վարչութիւնները վերակազմելու ի շարս ներքին նահանգներում այդօրինակ բարենորոգում մտցնելու որոշման, Կովկասի զեմստվային պահակախումբը վերակազմելու, կովկասեան ազգաբնակութեան մասնակից անելու դատարանին, շինական աշխատանքը և շինական կառավարութիւնը (управленіе) վերակազմելու, զինւորա-ժողովրդական դատարանները բարձելու, զինւորա-ժողովրդական կառավարութիւնը Կարսի և Բաթումի շրջաններում ընդհանուր քաղաքացիականով փոխարինելու, երկրի ստորին դատարաններում տեղական լեզուները թոյլատրելու, տարրական դպրոցներում տեղական լեզուներով դասաւանդելու և կովկասեան զինւորական վիճակի միջնակարգ դպրոցներում տեղական լեզուները կանոնաւոր տնօրինութեամբ աւանդելու, պետութեանը միլիոններ արժեցող հողաչափութեան (межеваніе) հետևանքները պահպանելու համար Կովկասում ժառանգական (вотчинный) սիստեմ մտցնելու, ջրից օգտվելու գոյութիւն ունեցող կանոնները վերաքննելու՝ Անդրկովկասում ջրաբաշխական գործը լայն դրութեամբ հանդերձ, պարզելու՝ թէ Կարսի և Բաթումի շրջաններում ազգաբնակութիւնը ինչ իրաւունքներ ունի քաղաքից դուրս գտնվող հողերի, քէշլէնի, մալջահատ և ախչէմի հողերի վրա, դադարեցնելու գաղթականութիւնը ներքին նահանգներից դէպի Կովկաս, հողազուրկ և հողասակաւ գիւղացիներին նադէլներ տալու ազատ մնացած պետական բազմաթիւ հողաբաժիններից, վերջապէս գիւղացիների և կալուածատէրերի միջև գոյութիւն ունեցող պարտադիր կախման դրութիւնը վերջացնելու։ Այս բոլորի բացատրութիւնը անհրաժեշտ է, որ մենք նպատակայարմար կերպով կարողանանք օգտվել օրէնսդրական նախաձեռնութիւններից»։

Յիշեալ յայտարարութիւնը կը տպագրվի և կը բաժանվի Դումայի անդամներին ընդհանուր ժողովում քննելու համար։

(«Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 26 մարտի

Մի քանի օր առաջ Ջուլֆայի ճանապարհին Թուրքերը վիրաւորել են խճու[illegible] ասում են, որ նա մեռել է։

Տեղիս ընդհանուր նահանգապետը պաշտօնանկ է եղել։ Թեհրանից նրա փոխարէն գալիս է Ալայիդ-Դօվլէ յայտնի նահանգապետը զինւորական մեծ ույժով. երևի տեղիս «Անջումանը» ցրելու համար։ Դժուար թէ առանց արիւնհեղութիւնների պարզէ մեր մթնոլորտը։

Յայտնի ֆիդայի Գաֆարը, որ մեր ժողովարանում պիտի խօսէր, մի քանի ազդեցիկ հոգևորականների խորհրդով անյարմար համարեց խօսել։ Երկիւղալի է և մեր հայերիս դրութիւնը։ Այստեղ էլ պրօվօկացիայի հոտ է գալիս. արդեօք մի քանի օտարահպատակ քրիստոնեաներ չէ՞ն զոհաբերի, որպէս զի առիթ տրվի մի որևէ օտար պետութեան ներս մտնելու սահմանը։

Երէկ Արդաբիլից հեռագիր ստացվեց, որ գիշերը վիրաւորվել է այնտեղ Աւետիս Եղիշէբեկեան անունով մի հայ վաճառական։ Ենթադրվում է, որ Թուրք ֆիդայիների գործը լինի, որոնցից բաւականին թւով կան այնտեղ։

Ի.

—

Թեհրան, 2 ապրիլի.—Ներքին գործերի մինիստրը, որ շարունակ յարձակումների էր ենթարկվում մէջլիսում անգործութեան համար, հրաժարական տուեց։

(«Հ. Գ.»)

—

Բագու, 2 ապրիլի.—Ապրիլի 1-ին նաւատէրերի ընդհանուր ժողովում որոշվեց նաւաստիների և կաչէգարների minimal ռոճիկը 25 րուբլի, և ղեկավարներինը՝ 30 րուբլի։ Նաւի վերին մասում աշխատող նաւաստիները փոխանակվելու են երկու անգամ, իսկ ներքևում աշխատողները—երեք անգամ։ Ձմեռ ժամանակ, երբ նաւերը կանգնած են, բանւորներին չը պէտք է արձակել։ Այս համաձայնութիւնը, որ գլուխ եկաւ մեծ դժուարութեամբ, ընդունվեց բանւորների ժողովում, ուր որոշվեց գործադուլը շարունակել։ Ի նկատի առնելով այսօրինակ վճիռը, Բարձրագոյն հրամանով ուղարկված գեներալ Տաուբէն վճռեց գործադրութեան հանել ջրագնաց (наливный) նաւերը զինւորական նաւաստիների օգնութեամբ։

(«Հ. Գ.»)

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Ապրիլի 2-ին, երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ին առաջնորդարանում կայացաւ կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի նիստը, նախագահութեամբ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանցի և մասնակցութեամբ անդամների—պ.պ. Ալ. Մելիք-Ազարեան, Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան, իշխան Ա. Մ. Արղութեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Աւ. Արասխանեան և Աւ. Սահակեան։ Բագուի Նպաստամատոյց մասնաժողովի կողմից ներկայ էր և պ. Լ. Ղուլեան։

Յանձնաժողովը քնութեան առնելով Բագուի Նպաստ. մասնաժողովի գրութիւնները, սերմացուի և ուտելիքի մասին, պ. Լ. Ղուլեանի տուած բացատրութիւնները և զանազան կողմերից եկած առաջարկները և խնդրագիրները՝ որոնցով զանազան շրջանների գիւղեր նպաստներ են հայցում սերմացուի և ուտելիքի համար, կայացրեց հետևեալ որոշումները.

1) Յարգելով Բագուի Նպաստամատոյց մասնաժողովի առաջարկը, յատկացնել Շուշու և Զանգեզուրի շրջանների սովեալների համար 15,000 րուբլի, գործադրելով այդ գումարը Բագուի մասնաժողովի կողմից իբրև լիազօր Շուշի գնացած պ. Յովսէփ Խոնունցի ձեռքով։

2) Խնդրել Բագուի մասնաժողովից, որ կարգադրէ 12 վագօն ցորեն ուղարկել Ուլուխանլու և Ջուլֆա կայարանները, որպէսզի 8 վագօնը փոխադրվի Սիսիան, իսկ 4 վագօնը բաժանվի Հին-Նախիջևանի գաւառի սովեալներին։ Փոխադրութեան ծախքը Ուլուխանլուի կայարանից Սիսիան իր վրա է առնում կենտրոնական Յանձնաժողովը։

3) Յատկացնել Հին-Նախիջևանի գաւառի գիւղերի համար սերմացուի և ուտելիքի 3000 րուբլի։

4) Յատկացնել Բաղա գիւղի համար նոյն նպատակով 3000 րուբլի։

5) Յատկացնել Շամշադինի շրջանի համար 3000 րուբլի։

6) Յատկացնել Ջիվանշիրի գաւառի համար 2000 րուբլի։

Շնորհիւ այն հանգամանքի, որ կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը վերջերս ստացաւ գումարներ, թէ պատգամաւորութեան հանգանակած և թէ մանաւանդ Միրզօյեան ընկ. որոշած 3000 րուբլին, հնարաւոր եղաւ միանգամից մեծ նպաստներ յատկացնել գլխաւորապէս սերմացուի և մի մասն էլ ուտելիքի համար։

(Հեռագրով)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ Դուման մտադիր է նստաշրջանը չընդհատել զատկական տօների ժամանակ. միայն նիստերը յետաձգել ամենաշատը 10 օր աւագ—շաբաթվայ վերջին երեք օրը և ամբողջ Զատկական շաբաթը։

ՍՈՎԸ ԱՊԱՐԱՆՈՒՄ

Ճգնաժամի մէջ է գտնվում մի ամբողջ գաւառ, որ ամբողջ նահանգի ուժեղ երկրագործն է, որի բերքը առատութիւն է նշանակում ամբողջ այդ երկրին, կամ անբերրիութիւնը թանգութիւն։ Վերջին տարիների անբերրիութիւնը դրին նրան սոսկալի թշուառութեան մէջ. ժողովուրդը անցեալ տարվայ առատ քուլաշի տեղ միմիայն խոտ հնձեց և այդ պատուհասին միացաւ այս տարվայ երկարատև ու սոսկալի ձմեռը, ուր նոյնիսկ գիւղից գիւղ այսօր երթևեկելը ձիով անհնարին է դառնում։ Մարդիկ սովի, քաղցի են մատնված և այդ դժբախտ ժողովրդի դրութիւնը աւելի ևս յուսահատական է, երբ ոչ ոք նրան չէ տեսնում, նրան օգնութեան ձեռք չէ կարկառում։ Գիւղացիք փախչում են նոյնիսկ իրանց վաթանից. այդ խոր ու խոնաւ խրճիթները սպանդանոց են ու դժոխքի տանջանքներով լի են։ Սովին միացել է նրա անբաժան ընկերը, հիւանդութիւնն ու մահը, որ հնձում է հիւծման ենթարկված ժողովրդին։ Օգնեցէք այդ չարատանջ երկրագործին, օգնեցէք քանի դեռ ուշ չէ, քանի ձիւնը չէ վեր կացել և այդ ժողովուրդը իր քաղցը չէ սկսել յագեցնել բուսականութեամբ և արմատներով, օգնեցէք քանի շուտ է, ապա արդէն ուշ կը լինի, երբ սովը կը մտնէ իր ծայրայեղ փազիսի մէջ՝ մահաթոյլ ճիրանները տարածելով ամեն տեղ։

Բայց երբ մարդիկ զգացմունքի ձայնը բարձրացրած օգնութիւն են աղաղակում այդ դժբախտ մերձակիցներին, նոյն հէնց այդ տառապող ժողովրդի մէջ աւելի ուժեղ կերպով գործում է վաշխառու տարրը, դաժան և անգութ ամբարատէրը, որ դևի նման նստած այդ հարստութեան վրա, մէկին մէկ, հազար տեսակ զազրային մեքենայութիւններով, խեղդում է նրան իր մուրհակային ցանցի մէջ։ Մի թանգ տարվայ պարտքը գիւղացու համար կորուստ է, որը տասը տարվայ ընթացքում չէ կարողանում ազատվել կրած տնտեսական հարուածից։

Նախանձելի դրութեան մէջ չեն և շրջակայ Թուրք գիւղացիները, որոնք հայ-թուրքական դէպքերի ժամանակ խուժանային ամբոխից այնպէս թալանվեցին, որ նոյնիսկ մի լաթ անգամ չը մնաց մէջը քնելու։ Անցեալ ձմեռ նրանք խոտերի մէջ էին քնում և անցնում էին կեանքի և մահվան տագնապալի օրեր։ Այս տարի նրանք ոչինչ չունեն բառի բուն նշանակութեամբ, իսկ Թուրք հասարակութիւնը բարեգործութիւն բառի հետ կամ իր մերձակիցներին օգնութեան ձեռք պարզելու այնքան էլ ընդունակ և սովոր չէ։ Այդ պատճառով ունևոր հայ ժողովուրդը պէտք է առաջ գայ ցոյց տալու իր մարդասիրութիւնը, մի հողի, մի ջրի վրա ապրող իր եղբայրներին օգնութեան ձեռք կարկառելու. դա աւելի նրան կը կապէ համերաշխութեան ու եղբայրութեան սիրոյ կապերով:

Պէտք է շտապել, որովհետև սովը, քաղցը ժամանակ չէ պահանջում, ամեն մի օրն ու ժամը նշանակութիւն ունի: Կառավարութիւնը, որ այնքան ճշտապահ է իր հարկերի և հասոյթների վերաբերմամբ, պէտք է որ օգնութեան ձեռք պարզէ նրան նաև վտանգի ժամանակ. բայց արդեօք ժողովրդի տանջանքըն ու նեղութիւնը կարեկցութիւն յարուցանում է այդ շրջանի մէջ: Վերջերս մի պատգամաւորութիւն գնաց Թիֆլիս դիմելու Նըպաստամատոյց Յանձնաժողովին, որի միակ յոյսը այդ կազմակերպութեան վրա էր դըրված. յուսանք որ նա չի խնայի իր ձեռքից եկած միջոցները:

Ուսեալ հայ, բժիշկ, գարնան սերմացու— ահա թէ ինչ է հարկաւոր այդ վտանգված ժողովրդին. օգնեցէք որքան կարելի է շուտ:

Մուշեղ Բագրատունի

ՕՐՎԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

IV

Հնաւանդ մահաշունչ հովը նորից է փչում:

Նոր կարգի ստեղծագործութեան օրերում, կուլտուրական վերածնութեան արշալոյսին բթացնող ու այլասերող րուտինան նորից է իր ձայնը բարձրացնում:

Այս անգամ նա կատաղի թափով մոնչում է կրթական հաստատութիւնների դէմ. վտանգ է սպառնում միջնակարգ կրթական հաստատութիւններին—գիմնազիաներին, րէալական դպրոցներին:

Բարձրագոյն դպրոցների ինքնավար, աւտոնոմ իրաւունքների դէմ ոստիկանական իշխանութեան կողմից սկսված արշաւանքներն ու դաւադրութիւնները, կրամոլայի այդ կարծեցեալ բները ոչնչացնելու նպատակով, աւելի ու աւելի են կոնկրետ ձև ստանում երկրի ղեկավարող շրջաններում և հարցադրման առիթ դառնում բարձրագոյն հաստատութիւնների մէջ: Եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, որի իրաւասութեան ու պատասխանատուութեան տակ են գտնվում այդ կրթական հաստատութիւնները, անզօր է հանդիսանում պաշտպանելու նրանց կողմնակի յարձակումներից, կողմնակի միջամտութիւններից: Ցաւալի է այդ, իհարկէ, և ընդունենք, որ նա, իսկապէս, անզօր է այդ բանում:

Բայց ինչպէս բացատրել այն վարմունքը, որ նոյն մինիստրութիւնը ցոյց է տալիս միջնակարգ դպրոցների վերաբերմամբ:

Ինչով արդարացնել այն մի շարք րեպրեսսիաները, խստութիւնները, որ վերջին ժամանակներս ձեռք են առնված նրանց դէմ:

Ասում են՝ թէ ինչ-ինչ զեկուցումների հիման վրա մինիստրութիւնը եկել է այն եզրակացութեան, որ ներկայ աննորմալ, անբարեյաջող պայմանների շնորհիւ միջնակարգ դպրոցների ուսանողների մէջ զգալի չափով պակասել է գիտութիւնը և ուսանելու ծարաւը:

Հասկանալի և մասամբ արդարացի նկատողութիւն:

Սակայն այդ պակասութիւնները ուղղելու և դպրոցը իր կոչման բարձրութեան վրա [illegible] մինիստրութիւնը: Նա առաջարկում է ոչ թէ վերացնել դպրոցի առաջ ցցված աննորմալ, անբարեյաջող պայմանները, որ բնական կը լինէր սպասել, այլ դէպի հասարակական կեանքը վազող գիտութեան ազատ ընթացքի առաջ խրամատներ փորել նրան կանգնեցնելու համար: Այդպիսի խրամատների շնորհիւ անշուշտ պէտք է սկսվի յետադարձ, յետադիմական մի շարժում, և առաջադիմական ու յետադիմական հոսանքների ընդհարումից պէտք է ծնունդ առնեն մատաղ սերունդի սև-հարիւրեակային այլանդակ տարրերը:

Ժողովրդական լուսաւորութեան մի որոշ ղեկավարներ, որ այնքան եռանդով զինակցում են ոստիկանական կարգերի սիրահարներին՝ մաքուր գիտութիւնը աղաւաղելու և ուսման տաճարները քայքայելու համար, լոկ ազատագրական շարժումը խեղդելու նպատակով, այսօր իրանք են խրախուսում, սերմանում սև-հարիւրեակային գաղափարները ուսանողութեան մէջ:

Այդ ցաւալի երևոյթի վրա «անզօր» մինիստրութիւնը աւելացնում է մի յետադարձ քայլ, առաջարկում է քննութիւնների սիստեմը վերականգնել միջնակարգ դպրոցներում:

Մանկավարժական գործում, աւելորդ է նոյն իսկ ասել, որ քննութիւնների վերականգնելը նշան է ոչ թէ առաջադիմութեան, այլ յետադիմութեան:

Անկասկած է, որ այդ հին, անպէտք համարված ու արդէն վերացված միջոցը նորից ձեռք է առնվում իբրև մի միջոց կրամոլան զսպելու կամ արմատախիլ անելու յուսով: Սակայն, ինչպէս բիւրոկրատական բոլոր միջոցները, այդ միջոցն էլ կը տանի միանգամայն հակառակ նպատակների:

Մտածողութեան այն եղանակը, որ առհասարակ ունեն իշխող շրջանները կրթական հաստատութիւնների և ուսանող երիտասարդութեան մասին, ընդունակ չէ ժառանել իբրեն դրութեանը բարեացակամ ձգտումներով: Նրանք ուզում են պարտադիր դարձնել իրանց խերացրած այդ ուղղութիւնն ու կարգերը, որոնք կրում են իրանց վրա զինւորական կոյր հնազանդութեան դրոշմը: Մոռանալով սակայն, որ դպրոցը չէ կարող ո՛չ զօրանոց դառնալ և ոչ էլ ռազմական նպատակների ծառայել:

V

Րէակցիայի բարձրացրած կլանչիւնը, ինչպէս երևում է, խոր ազդեցութիւն է թողնում: Լուսաւորութեան մինիստրութիւնը դպրոցական ներկայ ազատ կարգերի դէմ արտայայտված դժգոհութիւնից դրդված, խախտված կարգապահութիւնը վերականգնելու նպատակով վերադառնում է դէպի յետ, դէպի հին կարգերը և հնութեան փոշիների տակից դուրս է հանում ախուր հռչակ ստացած հակակըրթական ուղղիչ միջոցները:

Մամուլի էջերում մօտ օրերս լուրեր երևացին, որ միջնակարգ դպրոցներում նորից են մտցնելու ոստիկանական կարգերը: Անհնազանդութեան կամ մի որևէ յանցանքի դէպքում աշակերտները դժբաղդութիւն պէտք է ունենան լսելու տեսչի ահաւոր հրամանը.

—Կարցեր նստացրէք. պակսեցրէք վարքի թւանշանը. արտաքսված էք:

Կարճ և ազդու հրամաններ: Բայց որքան տանջանքներ, որքան արցունքներ են քաշել այդ հրամանները մատաղ սերնդից, քանի դեռատի սրտեր քարացել, հուսաթափվել, լըրման զոհ են դարձել կամ անզգայացել դաստիարակչական այդ սիստեմի բովում:

Եւ միթէ պատմութեան այդ ախտաւոր, կսկծեցուցիչ էջը նորից պէտք է պատկերանայ մեր առջև իր ամբողջ այլանդակութեամբ, նորից տանջանքներ ստեղծի, նոր արցունքներ քամի:

Եթէ հաւատանք լրագրական տեղեկութիւններին, բիւրոկրատական հնարագիտութիւնը ազատագրական շարժման դէմ ուղղված մըրցութեան ժամանակ այնքան է հեռուն գնում, որ ոչ միայն չէ բաւականանում դպրոցը զօրանոցի վերածելով, այլ և ձգտում է անջատել դպրոցը ընտանիքից, հասարակութիւնից: Մի բան, որ միանգամայն հակասում է դպրոցի հիմնական նպատակներին: Դպրոցներին կից կազմված ծնողական խորհուրդները, որ նըպատակ ունեն շաղկապել դպրոցը հասարակութեան հետ և դուրս վանել նրա միջից հին րուտինան, այժմ մտադրութիւն կայ վերացնելու:

Մտադրութիւն կայ միևնոյն ժամանակ խլել մանկավարժական խորհրդի լիազօրութիւնների մի մասը և, ընդհակառակը, աւելացնել դիրեկտորների իրաւունքները:

Դարձ դէպի հին րեժիմը,—ահա ինչպէս կարելի է բնորոշել այդ խնամատարութիւնը:

Մեր դժբաղդ իրականութեան մէջ [illegible] դաստիարակութեան դեվիզը մոռացած, մատաղ սերնդի համար ժողովրդի լուսաւորութեան գործը ղեկավարող բիւրոկրատները անկարող են և չը գտան կրթական աւելի արժանավայել մի միջոց, քան այն, որ նպատակ ունի դպրոցը դարձնել զօրանոց:

Կարող է և իրաւունք ունի լռել հասարակութիւնը, եթէ այդ դիտաւորութիւնները վաղը իրականանալու լինեն:

Լ. Դանիէլեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նալբանդեանի կօնցերտը.—Երգչուհի Գալվանի.—Անդրէևի «Մարդի կեանքը» պիեսի ներկայացումը:

I

Ջութակահար Յ. Նալբանդեանի վերջին կօնցերտը, որ տեղի ունեցաւ ապրիլի 2-ին, մատակարարում էր նոր նիւթ արտիստի նուագածութիւնը լիակատար կերպով արտայայտելու համար: Եւ ժողոված բազմաթիւ հանդիսականները մեծ հաճոյք զգացին գեղարւեստօրէն երաժշտութիւնից: Բեթհովենի, Շոպէնի, Բրամսի, Գլազունովի, Չայկովսկու գործերը բազմազան տրամադրութիւններ ներշնչեցին ունկնդիրներին:

Բեթհովենի սօնատան լուրջ և մեծ երկասիրութիւն է, որի գնահատութիւնը պահանջում էր ունկնդիրներից կենտրոնացում: Մեծ հաւանութիւն գտաւ Գլազունովի «Կօնցերտը»: Սրտագրաւ էր Շոպէնի «Նոկտիւրնը»:

Արևելեան եղանակները, իբրև շատ ընտանի կովկասցիների համար, տպաւորութիւն էին գործում թէ իրանց հարազատ եղանակներով [illegible]տութեամբ:

Դաշնակահար Պոկրովսկին աւելի ու աւելի համակրութիւն է գտնում մեր հասարակութեան մէջ: Նրա նուագածութիւնը բազմազան էր: Նրան ստիպեցին բազմաթիւ անգամ բեմ դուրս գալ և նուագել նոր երաժշտական գործեր:

Նալբանդեանը վերջացնելով Թիֆլիսում իր կօնցերտների շարքը՝ երեկ ճանապարհ ընկաւ Երևան, Կարս և Ալեքսանդրոպոլ:

Երևանում նրա կօնցերտը տեղի կունենայ այսօր երեկոյեան:

II

Օպերային երգչուհի Գալվանին հանդէս եկաւ երկուշաբթի, ապրիլի 2-ին, «Սեվիլեան սափրիչ» օպերայի մէջ:

Գալվանիի ձայնը առաջնակարգ ձայներից մէկն է: Նա մաքուր է, ախորժ հնչիւնով, առողջ բոլոր աստիճաններում: Նրա ձայնի [illegible] դալլալները, հմայիչ ելևէջները, բազմաձև կլկլոցները, ազատ մելօդիաները փաղաքշում են հանդիսականի լսողութիւնը և ազդում հրճուանքի զգացմունք: Ռօզինայի դերը առատ նիւթ էր տալիս Գալվանիին ցոյց տալու իր ձայնի հարստութիւնը և հասարակութիւնը համոզվեց, որ նրա առաջ մի աչքի ընկնող երգչուհի է:

Գալվանին արժանացաւ բուռն, երկարատև ծափահարութիւնների:

III

Լ. Անդրէևի «Մարդի կեանքը» (Жизнь человѣка) պիեսի ներկայացումը գրաւել էր հանդիսականների շատ մեծ բազմութիւն դէպի Արտիստական թատրոնը:

Պիեսը սիմվօլիք բովանդակութիւն ունի: Հանդիսականների մէջ կային հաւանողներ և չը հաւանողներ: Միջարարներում տեղի ունէին անվերջ վիճաբանութիւններ և մեկնաբանութիւններ:

Պիեսի մէջ կան տպաւորիչ տեսարաններ:

Գուցէ մի ուրիշ անգամ կանգ առնենք այդ պիեսի բովանդակութեան և իմաստի վրա:

Դերակատարներից աչքի էր ընկնում Բլիւմենտալ-Տամարին: Անսամբլը ընդհանրապէս բաւարար էր:

Սիրող

ՆՈՐԱՇԷՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Վերջապէս երեք անգամ հրաւիրատոմսեր ուղարկելով՝ այս ու այն ծխականին առանձին-առանձին խնդրել ու համոզելով՝ աջողվեց կիրակի ապրիլի 1-ին երրորդ և վերջին ժողովը կայացնել: Երէցփոխ-հոգաբարձու Ստեփան Մնացականեանը իր տկարութեան պատճառով, ստիպված, հրաժարական է տուել: Իր երկամեայ, կարճատև և բեղմնաւոր պաշտօնավարութեան ընթացքում յարգելի Մնացականեանը, նոյնիսկ չափազանցութեան հասցրած եռանդով, իր խնամքին յանձնված եկեղեցին, աւելի ճիշտն ասած դպրոցը, բարեկարգ վիճակով առաջ էր տարել: Չը նայած եկեղեցու և մանաւանդ դպրոցի նիւթական կատարեալ բացակայութեան, առաջինում՝ ի նախատինս Թիֆլիսի նիւթականով ապահով միւս եկեղեցիների՝ երկու տարվայ ընթացքում անընդհատ պահվել է կանոնաւոր և ներդաշնակ երգեցիկ խումբ, դպրոցը լաւ ուսուցչական կազմով և ընտիր վերանորոգութիւն: Այդ բոլորը նա արել է առանց ոչնչի, միմիայն իր եռանդը և ընկեր հոգաբարձուների աջակցութիւնը ունենալով: Այժմս նա հրաժարվել է և ահա այս ժողովը հրաւիրված էր նրան փոխարինող ընտրելու: Չը նայած սա երրորդ ժողովն էր, բայց և այնպէս կրկին բազմամարդ չէր. այնքան են հետաքրքրվում մեր ծխականները իրանց հասարակական գործերով:

Ժողովը բացվում է, որին նախագահ է ընտրվում պ. Ա. Բիշմիշեանը. նախ քան ընտրութեան անցնելը, նախագահը, առաջարկութեամբ պ. Ա. Շամշինեանի, առաջարկում է ժողովին շնորհակալութիւն յայտնել իրանց յարգելի և գործունեայ երէցփոխ-հոգաբարձու Մնացականեանին, որը և ընդունվեց միաձայն: Այնուհետև անցան ընտրութեան. միաձայն, բացարձակ քուէարկութեամբ ընտրվեց Միքայէլ Զաքարեան Թամամշեանը, որը երիտասարդ և կրթված անձնաւորութիւն է և յոյս ունինք, որ Մնացականեանի սկսածը նոյնքան աջողութեամբ պիտի կարողանայ առաջ տանել:

Աւելորդ չեմ համարում արձանագրել և մի տխուր երևոյթ մեր աղա-հարուստների բարքերից: Դպրոցի նիւթականին օգնութիւն հասցնելու համար ծխականներից ընտրված է մի մասնաժողով, բաղկացած մի քանի տիկիններից, օրիորդներից և պարոններից, որոնց յանձնարարված է շրջել ծխականների մէջ և ծխական ժողովում որոշված ծխական տուրքերը հաւաքել: Եւ ինչ էք կարծում. մեր հարուստ հաստափոր աղա ծխականներից ոմանք, ինչպէս յայտնեց ժողովի նախագահը յանձնաժողովի անդամներին, աւելի ճիշտն ասած տիկիններին և օրիորդներին, փողի փոխարէն վիրաւորանքներ, նոյնիսկ հայհոյանքներ հրամցնելով ճանապարհ են ձգում: Սա էլ մեր հարուստները. ճակատնիդ ճերմակ...

Ծխական

ԹԻՖԼԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՋՈՀՐԱԲԵԱՆԻ ՃԱՌԸ

Պետական Դումայի մարտի 27-ի նիստում բիւջէտի հարցի առիթով Թիֆլիս քաղաքի պատգամաւոր Ա. Ջոհրաբեանը արտասանել է հետևեալ ճառը, որ առաջ ենք բերում ստենոգրաֆիական տեղեկութիւնների հիման վրա:

«Բիւջէտի հարցի վերաբերեալ մինչև այժմ արտասանված ճառերի մէջ, համարեա, բոլոր ճառախօսներն էլ խօսում էին Դումայի բիւջէտային իրաւունքների մասին: Լիովին միանալով իմ կուսակցական ընկեր Ալեքսինսկու ասածներին Պետական Դումայի բիւջէտային իրաւազուրկ դրութեան մասին, ես պէտք է նկատեմ, որ մեզանից իւրաքանչիւրը, գիտակցելով այդ, կանգնած էր մի այնպիսի հարցի առաջ, թէ՝ ինչպիսի՞ կօնկրետ մերձաւոր անմիջական նպատակներ էր հետևում կառավարութիւնը, երբ առաջարկում էր իր բիւջէտը Պետական Դումային [illegible] չէր հետաքրքրում այդ հարցի զուտ ձևական բնաւորութիւն ունեցող շարժառիթները, շարժառիթներ, որոնցից դրդված, կառավարութիւնը պարտաւոր էր բիւջէտը ներկայացնել Պետական Դումային հաստատելու, բայց ինձ հետաքրքրում է հարցը ըստ էութեան, որովհետև ինձ թւում է, որ եթէ մենք ճիշտ պարզենք այն մերձաւոր նպատակը, որին հետևում է կառավարութիւնը այդ հարցում, այն ժամանակ մենք կարող կը լինենք որոշել և մեր վերաբերմունքը այդ հարցում, ինչ ուղղութիւն տալ այդ բիւջէտին: Ես ի զուր որոնեցի այդ հարցի պատասխանը թւերի այն շեղջակոյտի մէջ, որը թիւրիմացութեամբ, կառավարութեան լեզուով, կոչվում է բիւջէտ: Նմանապէս բոլորովին ի զուր էի ես փնտրում այդ հարցի պատասխանը բիւջէտին կցված մեկնութեան բաժնում: Սակայն ֆինանսների պ. մինիստրը իր առաջին ճառում ուղղակի որոշ կերպով պատասխանեց այդ հարցին: Բիւջէտի քննութիւնը, ինչպէս ասում է ֆինանսների մինիստրը, արտակարգ կարևորութեան խնդիր է, որ անկարելի է մի փոքր անգամ ուշացնել: Նրան չէ կարելի ընդհանուր հերթի մէջ դասել, այլ պէտք է նայել հերթից դուրս: Այդ պահանջում են պետութեան ամենաանհրաժեշտ շահը, ամբողջ ազգաբնակութեան կարիքները և այդ ոչ թէ այն պատճառով, որ պետական հաշւեկշիռը եթէ հաստատված չէ Դումայի կողմից, կառավարութեան համար դժուար կը լինի իր ժամանակին կատարել այս կամ այն ծախքերը: Այդ դժուարութիւնը ներկայումս գոյութիւն չունի, որովհետև կառավարութիւնը իր տրամադրութեան տակ ունի բոլոր օրինաւոր և անհրաժեշտ դրա համար միջոցները: Եւ այդ նշանակում է, որ բիւջէտային հարցում կառավարութիւնը ունի բոլոր օրինականութիւնները: Առաջին օրինականութիւնը հէնց այն է, որի հիման վրա բիւջէտը առաջարկվում է Պետական Դումայի հայեցողութեան և քննութեան, իսկ միւս օրինականութիւնը յայտնի է միայն իրան կառավարութեանը, որի համաձայն նա կարող է կատարել այդ ծախքերը առանց Պետական Դումայի:

Այնուհետև ֆինանսների պ. մինիստրը ասաց հետևեալը. ձեր ուշադրութիւնը դարձնում եմ այն ծախքերի վրա, որոնց համար մենք միջոցներ չունինք, և կրկին անգամ շեշտեց, որ պատերազմի հետևանքները վերջացնելու, լիկվիդացիայի ենթարկելու, անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը մատակարարողական օգնութիւն տալու և նոր երկաթուղիներ շինելու համար մեր սովորական միջոցները չեն բաւականացնում: Հետևապէս կան երեք տեսակ ծախքեր, որոնց կատարելու համար կառավարութիւնը դրամ չունի, բայց որովհետև դրանք մտցրած են արտակարգ ծախքերի մէջ, այդ պատճառով, ինչպէս ֆինանսների մինիստրն է ասում, կառավարութեան համար անհրաժեշտ է փոխառութիւն անել այդ ծախքերը ծածկելու համար:

Այդպիսով բիւջէտը Դումային ներկայացնելու համար կառավարութեան մերձաւոր անմիջական նպատակը, պատճառը եղել է փողի բացակայութիւնը այդ երեք ծախքերը ծածկելու համար և այն անհրաժեշտութիւնը, որպէսզի Պետական Դուման ստորագրելով բիւջէտի տակ, թոյլատրի կառավարութեանը այդ նպատակով փոխառութիւն անելու:

Իմ ընկեր Ալեքսինսկին իր ճառում արդէն ասաց, թէ ժողովրդից հաւաքվող դրամները ինչպէս են ծախսվում: Ես կաշխատեմ շօշափել հարցը ուրիշ կողմից, այն է, թէ ինչպէս են հաւաքվում ժողովրդական այդ դրամները: Խնդիրը նրանումն է, որ մեր պետական տնտեսութեան և Արևմտեան Եւրոպայի մի որևէ սահմանադրական պետութեան տնտեսութեան միջև ահագին տարբերութիւն կայ: Այդ տարբերութիւնը կայանում է նրանում, որ այն ժամանակ, երբ եւրոպական պետութիւնը նախ յիշատակում է ծախքի անհրաժեշտ կէտերը ու ապա միայն որոնում եկամուտի աղբիւրը կամ փոխում վերջինս, մեզանում կառավարութիւնը հակառակն է անում: Նա վերցնում է ազգաբնակութիւնից այն ամենը, ինչ որ կարելի է այդ բօպէին վերցնել և այդ գումարը ստանալուց յետոյ արդէն սկսում է քննել ծախքերը: Ֆինանսների մինիստրը մեզ այստեղ, Պետական Դումայում, ասաց, որ ծախսերը կազմելիս ուշադրութեան է առնվել ամբողջ երկրի ծանր վիճակը, այսինքն չարաբաստիկ խլրտումները, անբերրիութիւնը, պատերազմի լիկվիդացիան և այլն, և որ դրանց շնորհիւ պակասել են ծախքերի մի քանի յօդուածները: Հարցը նըրանումը չէ թէ ինչպէս է կառավարութիւնը որոշել այն մաքսիմումը, որ կարող է ստանալ, այլ այն, թէ՝ այս բօպէին կառավարութիւնը ազգաբնակութիւնից վերցնում է մաքսիմումը այն բոլորի, որը նա կարող է տալ, այն բոլորը ինչ որ նա կարող է տալ, աւելին կասեմ, նոյն իսկ անցնում է այդ մաքսիմումի սահմաններից: Այսպէս օրինակ, ֆինանսների մինիստրը այս ամբիոնից խօսեց հացահատիկի մասին և չը պարզեց այն հարցը, թէ այն ժամանակ, երբ բազմամիլիօն գիւղացիութիւնը սովամահ է լինում, այլասերվում է, այն ժամանակ, երբ անգործութիւնը համաճարակում է երկրի մէջ, հարիւր հազարաւոր մարդիկ փողոց են նետված, ինչ ձևով, ինչպէս է պատահել, որ մեր պետական տնտեսութիւնը կարողանում է ենթադրել, որ իր բիւջէտական տարին փակում է երկու միլլիարդով:

Այդ հարցը ֆինանսների մինիստրը չը շօշափեց, բայց հէնց դրա մէջ է կայանում հիմնական չարիքը:

Ահա հէնց այդ էլ բնորոշում է մեր պետական տնտեսութիւնը, որ նա երկրի և ազգաբնակութեան վերաբերմամբ հանդիսանում է լիազօր տէր: Նա ազգաբնակութեան վերաբերմամբ այնպիսի յարաբերութիւններ է սահմանում, ինչպիսին կարելի է հանդիպել միայն հին ժամանակներում—ստրկատէրոջ վերաբերմունքը դէպի իր ստրուկները: Ինչպէս որ ստրուկները մասնաւոր սեփականութիւն ունենալու իրաւունք չունէին, այնպէս էլ մեր կառավարութիւնը վերցնում է ժողովրդից այն բոլորը, ինչոր կարելի է նրանից վերցնել, նոյնիսկ աւելին: Ֆինանսների մինիստրը հեգնաբար նկատեց, որ կէս դարից աւելի է ինչ շարունակ խօսում են վերջին կոպէկի մասին, [illegible] և այնպէս այդ վերջին կոպէկը գիւղացիների գրպանից չէ պակասում: Երևի ֆինանսների մինիստրը չափից դուրս լաւատես է, եթէ նա դեռ յոյս ունի հասնել այդ վերջին կոպէկին էլ: Ֆինանսների մինիստրը իր մեկնութեան գրութեան մէջ ասում է հետևեալը. պետական գինու մենաշնորհը, պետական երկաթուղիների շահագործութիւնը ընդհանուր առմամբ տալիս են 53,4 0/0, ապա կողմնակի տուրքերից 21 0/0 և այլն: Վերջ ի վերջոյ ուղղակի տուրքերը կազմում են միայն 7 0/0.

Ի. մինիստրը եզրակացնում է, որ այդ թւերով է արտայայտվում բիւջէտային եկամուտների բնաւորութիւնը, որոնց թւում տուրքերն ու հարկերը երկրորդական նշանակութիւն ունեն: Այն ժամանակ, երբ Արևմտեան Եւրոպայում աշխատում են կողմնակի տուրքերից անցնել ուղղակի և եկամտային սիստեմին, մեզանում բոլորովին հակառակ երևոյթ էր նկատվում: Մեզանում ուղղակիից նախ անցնում էին կողմնակիին, իսկ յետոյ, երբ ոչ նա և ոչ էլ միւսը չը գոհացրին գանձարանի ախորժակը, կառավարութիւնը ձեռնարկեց ուրիշ միջոցներ. Դեռ 70-ական թւականների կիսին ինչ որ տենդենցիա է նկատվում ուղղակի հարկից դէպի կողմնակին անցնելու: Երբ գիւղացիները 70-ական թւականների սկզբում ազատվեցին հողից և լաւ հողերը արվեցին կալուածատէրերին, երբ գիւղացիութիւնը սկսեց հետզհետէ աւելի ու աւելի քայքայվել և արդէն նշաններից երևաց, որ գիւղացիութիւնը այլ ևս չէ կարող դիմանալ հարկերի ծանրութեանը, այն ժամանակ անհրաժեշտ համարվեց թուլացնել մեր «փառաւոր» յաղթութիւնները ռուս-թուրքական պատերազմում, այն ժամանակ կառավարութիւնը, տեսնելով որ ուղղակի տուրքերը այլ ևս զարգացնել անհնարին է, դիմում է կողմնակի տուրքերին: Բայց արդէն 90 թւականների սկզբից կառավարութիւնը սկսում է նկատել, որ կողմնակի տուրքերն էլ աննպատակ են անցնում, ոչ հնարաւորութիւն չը կայ վերցնելու այնքան, որպէսզի կարելի լինի բաւարարութիւն տալ բոլոր այն ծախքերին, որ ինքնակալական կառավարութեան տեսակէտից անհրաժեշտ են համարվում. և ահա դեռ այն ժամանակ ֆինանսների մինիստրը Պետական Խորհրդի մէջ հետևեալ բնորոշ յայտարարութիւնն արեց: Ֆինանսների մինիստրը, պարտք համարեց վկայել Պետական Խորհրդի ժողովում, որ, արդարև, ազգաբնակութեան վրա դրված ուղղակի և կողմնակի տուրքերը իր լարման գագաթնակէտին են հասել արդէն, որ դրանից աւելի հարկերով ծանրաբեռնելը ոչ միայն օգտակար չէ, այլև հազիւ թէ հնարաւոր լինի իրագործել երկրի տնտեսական ներկայ պայմանների շնորհիւ: Ֆինանսական քաղաքականութեան նպատակը պէտք է լինի աստիճանաբար թեթևացնել հարկերի ծանրութիւնը: Ես կարծում եմ, որ ֆինանսների ներկայ մինիստրը մոռացութեան է տուել իր նախորդի այդ խօսքերը: Բայց եթէ նա յիշում է, գուցէ այստեղ յայտնէր, որ խօսելով գիւղացիների վերջին կոպէկի մասին, ինքը սխալ գործեց: Կառավարութիւնը աշխատում էր ո՛չ թէ թեթևացնել ազգաբնակութեան հարկերի ծանրութիւնը, այլ նա հնարում էր եկամուտի նորանոր աղբիւրներ:

Այդ աղբիւրներից մէկն էլ գինու հռչակաւոր մենաշնորհն էր:

Դիմելով այն տեսակ միջոցների, ինչպիսին է գինու մենաշնորհը, կառավարութիւնը դրանով էլ ցոյց տուեց, որ նա գտնվում է ֆինանսական սնանկութեան նախօրեակում: Մենք, պարոններ, յաճախ ենք առիթ ունեցել լսելու կառավարութեան զանազան գործակալներից, որ մասնաւոր սեփականութեան հիմունքները պէտք է սուրբ լինեն, մասնաւոր սեփականութեան այդ բուրժուազական իրաւունքը ընդունում է կառավարութիւնը մի քանի դէպքերում միայն, իսկ հէնց որ հարցը վերաբերում է ազգաբնակութեան լայն խաւերին, կառավարութիւնը մոռացութեան է տալիս այդ իրաւունքը:

Գինու մենաշնորհը մտցնելով կառավարութիւնը գրչի մի հարւածով էքսպրոպրիացիայի ենթարկեց, խլացրեց պանդոկապետների եկամուտը, և դա, պարոններ, մի նշանանգական մեծ քաղաքի էքսպրոպրիացիայի չնչին մասնիկն է կազմում: Սակայն կառավարութիւնը դրանով չը բաւականացաւ. Նա առանց խըղճահարվելու կողոպտեց և զեմստվային ու գիւղացիական համայնքները: Մի քանի ֆինանսիստների հաշւելով, այդ էքսպրոպրիացիաները տատանվում են 40—80 միլիօնների մէջ: Եթէ ուշադրութեան առնենք այն, որ գիւղացիական համայնքները իրանց այդ սեփականութիւնները [illegible] էին կուլտուրական—լուսաւորութեան կարիքների համար, պարզ հասկանալի կը դառնայ՝ թէ ինչպիսի խիստ հարւած հասցրեց կառավարութիւնը ազգաբնակութեան բարեկեցութեանը գինու մենաշնորհը մտցնելով: Այստեղ, այս ամբիոնից, մինիստրների խորհրդի պ. նախագահը յայտնեց. այդ—«ռուսկի վերխ»-ն է: Բայց ինչ են ներկայացնում կառավարչական այդ տեսակ էքսպրոպրիացիաները, եթէ ոչ իբրև նշանաբան ազգաբնակութեան համար, եթէ ոչ նոյն «ռուսկի վերխը»:

Այնուհետև ճառախօսը մանրամասն կերպով կանգ է առնում երկաթուղային տնտեսութեան վրա, շօշափում է կառավարութեան բռնած քաղաքականութիւնը նաւթային գործի և մաքսային տուրքերի վերաբերմամբ:

«Ֆինանսների պ. մինիստրը այստեղ ասաց, որ խլրտումները այն պատճառներից մէկն է, որոնք ժողովրդական տնտեսութիւնը քայքայեցին և մեր կրեդիտը անվստահելի դարձրին արտասահմանում: Ես այդ առիթով կասեմ պ. մինիստրին, որ նա չարաչար սխալվում է, եթէ միայն անկեղծաբար կարծում է, որ այդ այդպէս է: Մեր ժողովրդական տնտեսութեան քայքայման պատճառը ոչ թէ խլրտումն է, այլ մեր տնտեսական քայքայումն է պատճառ դարձել խլրտումների (ծափահարութիւններ): 80-ական թւականներին խլրտումներ չը կային, բայց դուք ինքներդ էիք խոստովանում բոլոր հաստատութիւնների մէջ, որոնց թւում և Պետական Խորհրդի մէջ, որ ոչ մի կերպով հարկերը աւելացնել չէ կարելի, որ կանգնած ենք ֆինանսական սնանկութեան նախօրեակում: Այդ սնանկութիւնից մենք խուսափեցինք նրա շնորհիւ միայն, որ ներս խուժե[illegible] գինու մենաշնորհը, շաքարի ակցիզը, երկաթուղիները պետական սեփականութիւն դարձնելը: [illegible] մեր կառավարութեան խօսքերը, ես կասեմ, երկրի արդիւնաբերող ույժերը յամենայն դէպս պէտք է փոխեն շահագործութեան այդ ձևերը: Այո, նրանք կը հանեն հին գլխարկը և կը հագցնեն նորը, իսկ յետոյ բարձրաձայն կասեն. «Մնաք բարեաւ, պարոններ! Եւ այս անգամ ընդմիշտ» (ծափահարում է ձախակողմը): Ես կուզենայի մի քանի խօսք էլ ասել այն տարակուսեան առիթով, որ այստեղ արեց Ստրուվէն. Ես այս ամբիոնը բարձրացել եմ ոչ այն նպատակով, որպէս զի հակաճառեմ կուսակցութիւններին, բայց, երբ մեր դէմ տարկում են, ես հարկաւոր եմ համարում ասել մի քանի ջերմ խօսքեր (ծիծաղ, ծափահարութիւն ձախակողմում): Ստրուվէի ամբողջ ճառը ուղղված էր սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան դէմ: Արդ, ինչ է պատահել: Սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը առաջարկել է իր բանաձևը և այդ բանաձևը պ. Ստրուվէին դուր չէ եկել. այդ պատճառով, բանաձևը չը քննադատելով ըստ էութեան, առանց շօշափելու նրա բովանդակութիւնը, «էֆֆէկտաւոր ժեստ» անուանեց նրան: Ստրուվէն ասաց, որ մենք, այս միևնոյն բանաձևը առաջարկելիս, մեր ամբողջ հոգով համոզված էինք, որ սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը ձայն չի տայ նրան: Ես սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի կողմից կարող եմ ասել, որ այդ ճիշտ չէ և որ մեր ֆրակցիան, երբ առաջարկում էր իր բանաձևը, հաւատացած էր, որ այդ բանաձևը պաշտպանութիւն կը գտնէ և կընդունվի բոլոր ռամկավարական խմբերի կողմից: Ընկեր Ալեքսինսկին ասաց, որ բոլոր իսկական ռամկավարները կը ստորագրեն այդ բանաձևի տակ, այն ինչ Ստրուվէն ասում է, որ մենք կանխեցինք յայտնել, որ սահմանադիր-ռամկավարները ռամկավարութեամբ չեն փայլում: Ի՞նչ է հետևում դրանից: Սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան, որպէսզի մի որևէ անախորժութիւն գործած լինի այդ կուսակցութեան դէմ, առաջարկել է պարզապէս հակառամկավար մի բանաձև. ուրիշ եզրակացութիւն անել չեմ կարող, որովհետև բանից երևում է, որ ռամկավարական կուսակցութիւնները, որոնց թւում և այն կուսակցութիւնը, որին պատկանում է Ստրուվէն, այդ բանաձևը ընդունել չեն կարող: Ստրուվէին «պաշտպանել» բառը շատ է դուր գալիս և, ինչ էլ ինքը անում է, իրան շարունակ այնպէս է թւում, որ նա պաշտպանում է կառավարութեանը (ծափահարութիւններ). նոյնն է, ներկայ դէպքումն է: Բայց ինչպէս երևում է, Ստրուվէն իսկապէս շատ քիչ է ծանօթ պաշտպանողական սկզբունքների հետ: Նա չը գիտէ, որ պաշտպանելու ամենագլխաւոր դժուարութիւնը պաշտպանվածներին հացից զրկելն է, (բացականչութիւններ աջակողմում. «ահա թէ ինչպէս») ամենաանհրաժեշտ, առաջնակարգ կարևորութիւն ունեցող մթերքներից զրկելն է: Պաշտպանողները չը պէտք է և չեն համարձակվի ներս թողնել որևէ մէկին պաշտպանվածների մօտ, ինչպէս այդ արեց Ստրուվէն, սնունդի մթերքներ տալով պաշտպանվածներին և միևնոյն ժամանակ ասելով. «ես պաշտպանում եմ» (աղմկալի ծափահարութիւններ ձախակողմում): Ստորագրելով այն բիւջէտի տակ, որը ներկայացնում է մեզ հին րեժիմը, մենք ստորագրած ենք լինում այդ միևնոյն րեժիմի տակ և հնարաւորութիւն ենք տալիս այդպիսով աւելի ևս ամրապնդելու այն օղակը, որ ձգված է ժողովրդի պարանոցը: Սակայն Ստրուվէն այդ բանում չափազանց օրիգինալ, բնորոշ հայեացք ունի. պաշտպանվածներին սնունդի պաշար մատակարարելով, առաջարկում է նրանց բանալ դարպասի դռները (ծափահարութիւն ձախակողմում) և ասում է. «Մենք այդ դռներից ներս չենք մտնելու, այլ դարպասի մէջ կռիւ ենք ուսնելու» (աղմկալի ծափահարութիւններ): Ինչպէս տեսնում էք, դա մի շատ միամիտ քաղաքականութիւն է, որին չեն հետևի նրանք, որոնք ցանկանում են կանոնաւոր կերպով պաշտպանել: Եթէ դուք, պարոններ, չէք ցանկանում ստորագրել մեր բանաձևի տակ, եթէ դուք ուզում էք անպատճառ աջակցել կառավարութեանը, ընդունելով նրա բիւջէտը, այն ժամանակ համարձակութիւն ունեցէք ասելու ամբողջ երկրին, որ դուք այս պատերի մէջ քաղաքական խաղ էք խաղում ի հաշիւ ժողովրդի (աղմկալի ծափահարութիւններ)»:

—

Այս ճառը առաջ բերելուց յետոյ աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել հետևեալ կարծիքի հետ, որ արտայայտում է «Парусъ» լրագրի թղթակից «А. О.»-ն: Նա ասում է.

«Վիճաբանութիւնները սկսվեցին սօց.-դեմօկրատ Ջոհրաբեանի ճառով, որ տևեց մի ժամից աւելի: Ջոհրաբեանը իբրև ճառախօս վատ չէ, բայց զուրկ է պերճախօսութիւնից և ոգևորութիւնից: Նրա ճառը աւելի գործնական բնաւորութիւն է կրում, խօսում է ըստ էութեան: Նա պահում է իրան կոռեկտ և զըսպված:

Մատնանշելով, որ կառավարութիւնը ձգտում է իր դիտաւորութիւնների համար հաւանութիւն ստանալու լոկ այն պատճառով, որպէսզի փոխառութիւն կնքի, ճառախօսը լայն տեսակէտով է քննադատում մեր ամբողջ ֆինանսական քաղաքականութիւնը:

Ջոհրաբեանը վերջացնում է իր ճառը վիճաբանելով Ստրուվէի հետ կուսակցական տակտիկայի հարցի վերաբերմամբ: Այստեղ ճառախօսը աշխուժանում է, ջղայնանում և խօսում սովորական միտինգային ճառախօսին յատուկ զայրոյթով: Նա վիճաբանում է ոչ ըստ էութեան փաստեր յիշելով, ոչ էֆֆէկտաւոր խօսքերով, բայց նրա ճառը ուժեղ է և սրամիտ:

Նա խօսում է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ծրագրային տակտիկայի պաշտպանման մասին:

Մենք պէտք է նկատենք, որ կադետների հասցէին ուղղած այդ յարձակումը չափազանց աջող է, եթէ միայն նայելու լինենք նրա վրա սօց.-դեմօկրատական կուսակցութեան տեսակէտից: Իսկ, ըստ էութեան, Ջոհրաբեանը, ի հարկէ, սխալ է, որովհետև բիւջէտի յանձնելը մասնաժողովին դեռևս չէ ապացուցանում, որ դրանով համաձայնվում են բիւջէտի բոլոր յօդուածներին էլ, այսինքն ամբողջ մատակարարողական մթերքները յանձնել թշնամուն»:

[illegible] յայտնում, որ սօցիալ-դեմօկրատները հրաժարվեցին աջակցել Դումայի այն աշխատանքին, որ նպատակ ունի մատակարարողական պաշարը կառավարութեան համար անախորժ դարձնել:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 29-ին

Մի քանի օր առաջ, գիշերվայ ժամի 9-ին երկու անձ մտնում են մի խեղճ, ջրատար մշակ խարխափորձի՝ Օհան Համբարձումեանի տունը, բարկանալով այդտեղ պառկած համագիւղացի դարձեալ մշակների վրա, գրում են նրանց բոլորի անունները և փորձեր են անում տնից դուրս հանելու տղամելի Օհանի սիրուն կնոջը, որը 6 զաւակների տէր է:

Երբ այդ փորձը չէ աջողվում, միւս երեկոյեան նոյն անձինք գալիս են նորից պահանջում կնոջը. երբ մերժում են ստանում, սկսում են մի քանի անգամ ատրճանակ կրակել լուսամուտով դէպի սենեակի ներսը՝ լեղապատառ անելով տան կենւորներին:

Միւս օրը մշակ Օհանը կնոջը իր հետ վերցնելով՝ գնում են քաղաքիս կից Յովհաննիսեանի այգին մշակութիւն անելու: Այդտեղ Օհանը գնում է քաղաքից ծխախոտ առնելու համար և այլ ևս չէ վերադառնում:

Այս մարդու անհետ կորչելը զանազան կարծիքների տեղիք է տուել: Կինը մեղադրում է այդ գործում այն երկու անձանց, որոնք անցեալ երեկոյեան եկել են իրանց տունը: Այս մասին դեռ ոչ մի զանգատ չէ յարուցված:

Երեկ տեղիս հայ զինւորները, մօտ 50 հոգի, հաւաքվելով՝ ճաշի էին հրաւիրված Բալուզեանի տանը: Զինւորները ամբողջ օրը անցկացրին մեծ ուրախութեամբ:

Տեղիս Ջուլհականոցը փակվելու վտանգի տակ է գտնվում. շատերի կարծիքով մեղքը ընկնում է անհեռատես վարչութեան անդամների վրա, որոնք իբրև ղեկավարներ չեն կարողացել գործը կանոնաւոր վարել:

Մի քանի օր առաջ տեղս եկաւ Ջուլհականոցի հիմնադիր տ. բժ. Օհանեան. մեծ յոյս կայ, որ տիկին Օհանեանը չի թողլ տայ, որ իր ձեռնարկած այդ օգտաւէտ հիմնարկութիւնը նիւթական սղութեան պատճառով մեռնի:

Քաղաքից մօտ 3 վերստ հեռաւորութեան վրա մասնաւոր անձինք ունեն մօտ հինգ հարիւր դեսեատին հողեր: Այդ հողերի մեծ մասը պատկանում է Համամֆիւեանի տոհմին, շնորհիւ այդ տոհմի անմիաբանութեան և իրար հետ ունեցած ժառանգական անհաշտ թշնամութեան, երկար ժամանակ այդ հողերը մնացած են անպէտք ընկած:

Այս ահագին տարածութիւն հողը տարեկան 200 րուբլի արդիւնք չէ տալիս իրանց տէրերին: Այժմս աւերի մատնված Սարօվի հայ գիւղացիք, այլ ևս հնար չունենալով վերանորոգելու կամ վերադառնալու իրանց գիւղը, կամենում են այդ հողը 10 տարով կապալով վերցնել, գիւղ դցել և իրանց հաշւին [illegible] ծախսել և այդ անջրդի հողերի համար իրանց միջոցներով ջուր հանել, որը, ինչ ասել կուզէ, ահագին օգուտ կը բերէ ապագայում հողատէրերին:

Եւ հայի ժառանգական անմիաբանութեան շնորհիւ հողատէրերը ոչ մի պայմանով չեն միանում այդ հողերը տալու նոյն իսկ ամենաձեռնտու պայմաններով սարօվցիներին, առաջնորդվելով այն տխմար մտքով, թէ աւելի լաւ է ես էլ փչանամ, եղբայրս էլ հետս, քան թէ ես էլ օգտվեմ, նրանք էլ։

Այսպէս է հայի ամեն գործը. քանի հայերի խանութները գտնվում էին Թուրքաց մասում, հայոց մասի մի խանութը քրէհ էր բերում 50—60 րուբլի. ներկայումս բարեխիղճ խանութատէրերը, իրանց խիղճը ուրացած 300 ր. 200 րուբլու են հասցրել։ Օգտվել կարելի է հանգամանքից, բայց ոչ այդքան անխղճօրէն։

Այժմս համասփիւռեաններից իւրաքանչիւր բաժնետէր ուզում է, որ սարօվեցիք իրանց պայմանը վերջացնեն իրանց հողերին կից միւս բաժնետէրերի հետ, որպէսզի ջուր բերելուց յետոյ իրանք աւելի լաւ պայմաններով տան գիւղացիներին։

Սակայն այդ ագահութիւնից այն առաջ կը գայ, որ սարօվեցիք զզվելով կը հեռանան, հողերն էլ կը մնան, ինչպէս մինչև օրս մնացել են, անմշակ և անարդիւնաբեր, իսկ իրանք էլ կարժանանան նզովքի թէ սարօվցիների և թէ քաղաքի հայ հասարակութեան կողմից։ Որովհետև սարօվեցիք այդ հողերի վրա գիւղ ձգելով, քաղաքն էլ աչքի առաջ ունի իր շահերը։

Սադան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարսում գիւղ (Գանձ. գաւ.), մարտի 25-ին։—Ծիծաղելի է հայկական իրականութիւնը, դժբախտ է նամանաւանդ գիւղական իրականութիւնը։ Մտքի խոհերով ծանրաբեռնված հարց էք տալիս. մինչև երբ այսպէս... Երբեմն տրամադրվում էք կարծելու, որ հայ շինականն էլ զերծ չը պէտք է մնացած լինի ընդհանուր առաջադիմութեան հոսանքից, որ համայն լուսաւորութեան ովկիանոսից դէմ յորձանքներ պէտք է հեղեղած լինէին գեղջուկի չոր ու ցամաք մտաւոր անդաստանը, որ նա կամայ ակամայ իր դարաւոր քնից սթափված ենթակայ պէտք է եղած լինէր լուսամիտ ձգտումների պրոցէսին. սակայն հիասթափվում էք, երբ կենդանի վկայ էք հանդիսանում, թէ ինչպէս հայ գիւղը դեռ միջնադարեան նախապաշարմունքի խանձաբուրում ագիտութեան մշուշով պատված, խաւար հոգու և անթափանցիկ մտքի անկարողութեամբ պարփակված առաջ ու յետ է խարխափում...

Ցաւալի է, երբ ականատես էք սնոտիապաշտութեան անէծքի զգացմունքով վարակված մարդկանց համոզմունքի չափ արմատացած հաւատալիքների, մանաւանդ կին-արարածների շրջանում։ Գիւղի աղբիւրը կանանց համար մի անսպառ լրատուն է, որտեղ յերիւրվում են ամեն տեսակ առէկօսէներ ու առասպելներ։ Ո՞ր գիւղացուն չէ յայտնի այդ աղբիւրներում կանանց յօրինած զաւեշտական պատմութիւններն ու ցնդաբանութիւնները, որոնք և գիւղում տարածվում են այնպիսի արագութեամբ, որպիսի արագութեամբ երբեք և ոչ մի անհրաժեշտ թռուցիկ չէ կարող տարածվել։ Ա՜խ, մանաւանդ մեր վհուկ, մեր ջադու պառաւները, ժամանակակից մատաղ սերնդի մեր այդ թշուառ դաստիարակները, այդ ողորմելի կենդանի մումիաները մրջափ են պլասնում մատաղ սերնդը, այդ տպաւորվող հոգիներն իրանց մթին հասկացողութեամբ։

Դեռ կենդանի մնացած կան այլանդակ սովորութիւններ, որ վաղուց պէտք է արմատախիլ անվէին յանուն մեր մատաղ սերնդի լուսաւորութեան։ Այսպէս, հէնց որ որևէ անյայտ աղբիւրից մի լուր է լոյս ընկնում կամ նիւրհվերջու գուշակութեամբ յայտնագործվում վերահաս վտանգ, ահա մեր ջադու պառաւները կազմ ու պատրաստ են իրանց ամենագիտութեամբը առաջն առնելու համաշխարհային աղէտի՝ զանազան զոհաբերութիւններով կամ պաղատանքով։ Օրինակ այն լուրը, որ հաւանականութիւն կայ մի մոլորակի երկրիս հետ ընդհարվելու մասին, սարսափի տակ է դրել մեր պառաւներին։ Երևի մոլորակի դուծը շարժելու համար էր, որ մեր կանայք մի քանի օր առաջ բրնձից, ձէթից ժողովք արին, եփեցին, ապա դռնէ դուռը բաժանեցին։ Գիւղիս բանիմաց երիտասարդներից մէկը նկատելով կաթսաները գիւղամիջում կրակի վրա՝ զայրանում և շուռ է տալիս կաթսաները, որի պատճառով անհօգին առէկօսէների ու անէծքների է արժանացել։ Մեղադրում են նաև, որ, եթէ աշխարհը կործանվի, ամբողջ մեղքը երիտասարդի շնչին է փաթթվում։ Օ՜հ, աշխարհ, օ՜հ ագիտութիւն։

Պատմում են նաև, որ Գանձակում մի նորածանուկ է ծնվել սպիտակ միրուքով ու մազերով, որը յայտնել է, թէ ճշմարիտ է, որ մոլորակը երկրիս հետ ընդհարվելու է և ինքը յատկապէս եկել է մարդկութեանը այդ պատգամը յայտնելու։

Ցաւով ենք յայտնում, որ ամսիս 16-ին գիւղիս մի քանի վերստ հեռաւորութեան վրա նամարդութեամբ սպանվեց տաժանակիր աշխատանքի դատապարտված, ամբողջ հայութեանը յայտնի Գանձակի փոխ-նահանգապետ Անդրէևի սպանման գործի մէջ մեղադրվող Գրիգոր Ղուկասեանը։

Յ. Երիցեան

—

Կաղզուան, մարտի 27-ին։—Ներկայ ուսումնական տարում մի շարք ներկայացումներ տրվեցան մեզանում ջերմեռանդութեամբ պ. Ա. Բօշարեանի և մասնակցութեամբ սիրողների, բայց ներկայ ժամանակում դիտմամբ չէինք ուզում «Մշակի» էջերը զբաղեցնել սովորական երեւոյթներով։ Մինչև օրս խաղացվել են «Վերածնունդ», «Նոր օճախ», «Մարող ճրագներ», «Բանաստեղծ», «Առաջ մեռան, յետոյ ամուսնացան», «Թագի համար» և վերջին անգամ «Մաղօյի կտակը» ու «Սուտ ճգնաւոր»։ Ես քննադատութեան յաւակնութիւն չունեմ, միայն այսքանը կասեմ, որ պ. Ա. Բօշարեանը ամեն անգամ իր ստանձնած դերում փայլել է սիրողների մէջ և բարեխղճութեամբ է վերաբերվել գործին, ինչպէս նաև վերջին անգամ «Սուտ ճգնաւոր» դերում։ Վերջին ներկայացումը նախաձեռնել էին մի խումբ պատանիներ, որոնցից մի քանիսը, իրանց պարզ ու ազատ խաղերով ցոյց տուեցին, որ խաղալու շնորհք ունեն։ Պէտք է նրանց մտցնել սիրողների խմբի մէջ։ Չէ կարելի չը յիշել նաև այն, որ այս տարի երկու սիրողուհիներ ևս բեմ դուրս եկան—տ.տ. Շ. Խաչմանդարեան և Ս. Տէր-Պօղոսեան։

Սակայն ինչ օգուտ, երբ մեր կեանքը այն աստիճան պղտորված ու նեխված է, որ գեղարուեստը չէ կարողանում մեզ կրթել, ազնուացնել... Դեռ շատ «սուտ ճգնաւորներ» կան մեր կեանքում՝ այն էլ ինտելիգենտ շրջանում, որոնք այս կամ այն սուրբ դրօշակի տակ ապաստանած՝ իրանց սուտ ինտրիգներն են առաջ տանում, իրանց «մանածը ներկում»... Դժբաղդութիւնն այն է, որ այդ «կօրածները»՝ հոտած սալորի նման՝ մեր մատաղ սերնդին էլ իրանց հետ ապականում են։

Վերոյիշեալ ներկայացման ընդմիջումի ժամանակ՝ ըստ ծրագրի՝ խումբը «Գացէք տեսէք» ժողովրդական երգը երգելիս՝ մի խումբ երիտասարդներ սկսում են մատներով ձեռքերի վրա զարկել ու ցինիք շարժումներ անել... Նրանց այդ լկտի շարժումներից խիստ վիրաւորված՝ երկու տիկիններ անարգում են նրանց և վէճի բռնվում, *) երբ նրանք պատասխանում են, որ երգվածը ժամանակակից երգ չէ, պէտք է այժմ յեղափոխական երգեր միշտ երգել... Եւ այդ խեղաթիւրվածներից մէկը՝ Դաշնակցութեան ինքնապաշտպանութեան գործում 300 րուբլի վաղվայ վարդապետի երկինքը չափելու թէօրիային է ենթարկել ու մինչև օրս էլ, չը նայելով քննութիւններին, չէ վճարել՝ առաջնորդվելով յիշեալ վարդապետի խորամանկ թէօրիայով *)։

Իսկ ես, խմբապետ համարված յիշեալ բարոյապէս ընկածներին շատ լաւ ճանաչելով երբեք չեմ վիրաւորվում. նրանց տգեղ վարմունքի մասին գրելու շարժառիթն էլ այս է, որ նրանց շրջապատող անմեղ պատանիների աչքը բացվի, ճանաչեն նրանց և զգուշանան։ Թող վիրաւորված յարգելի տիկիններն էլ ներողամիտ լինեն՝ աչքի առաջ ունենալով այն, որ վերոյիշեալ «ընկածները» յաճախ գտնվելով այնպիսի տեղերում, որտեղ ձեռքերի վրա մատներով զարկելը և լկտի շարժումները վայելուչ են համարվում, սովորել են և չեն կարող զսպել իրանց սրբավայրերում։

Մ. Ղազարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստը բացվում է ժամը 2 և 7 րոպէին։ Նախագահում է Գօլօվինը։ Զեկուցվում է կառավարութեան մտցրած օրինագծերի մասին. արդարադատութեան մինիստրի յայտարարութիւնը՝ դատաստանական պատասխանատուութեան ենթարկել Կիևի նահանգի պատգամաւոր Կրասիւլևկին, Աստրախանի բանտում ադմինիստրացիայի կատարած ապօրինի գործողութիւնների մասին հարցապնդումը, Օզուրգէթի գաւառում գործող պատժիչ զօրամասերը, Ռիգայի բանտում տեղի ունեցած ընդհարումը. սօցիալ-դեմօկրատների հարցապնդումը՝ գեներալ Տաուբէյին Բագու ուղարկելու մասին, որը Փրակցիայի կարծիքով հանդիսանում է միջամտութիւն—կապիտալի և աշխատանքի կռւում։

Երկար վիճաբանութիւններից յետոյ Դուման որոշում է ագրարային մասնաժողով ընտրելու կարգը, որը կը սկսվի ժամը 4-ին։

Հերթին դրված է ագրար հարցը։

Սուխանօվ նկարագրում է գիւղացիութեան ծանր կացութիւնը։

Կոմս Ստէնբօկ-Ֆէրմօրը խօսում է—թէ ազնուականութիւնը ինչ վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի առաջին Դուման։

Նախագահը գտնում է, որ դա հողային հարցին չէ վերաբերում։

Հոնսօրը գտնում է, որ ռուս ժողովուրդը ծիծաղում է սօցիալ-դեմօկրատների օրինագծերի վրա, կարծում է, որ գիւղացիների հողից օգտվելու տարածութիւնը ընդլայնելու համար աւելի հող կայ, քան հարկաւոր է. գնման արժէքի հարցը դեր չէ խաղում, բանը հողատիրոջ շնորհքի, ձեռնարկութեան ոգու, եռանդի, տնտեսութեան ներքին բարգաւաճման, արժան փոխատուութիւն ստեղծելու մէջն է։

Սէռօվը մանրամասն քննադատութեան է ենթարկում աջակողմեաններին, առաւելապէս սահմանադիր-ռամկավարների ագրարային ծրագիրները, գերակշռութիւն է տալիս սօցիալ-դեմօկրատների ծրագրին։

Խան-Խօյսկին մահմեդական Փրակցիայի կողմից միանում է սահմանադիր-ռամկավարների ծրագրին, սակայն գտնում է, որ գրաւվող հողերը պէտք է կազմեն ոչ թէ համապետական, այլ շրջանային ֆօնդեր։

Կիլեպօվսկին անարդարացի է համարում այն կշտամբանքները և նկատողութիւնները՝ թէ աջակողմեանները անտարբեր են դէպի ժողովրդական կարիքները. աջակողմեանները Դումա են եկել ժողովրդական կարիքներին բաւարարութիւն տալու համար, սակայն իհարկէ ոչ ժողովրդական մասսաները կառավարութեան դէմ կռւելու կազմակերպելով, այլ օրէնսդրական աշխատանքի ճանապարհով։ Այստեղ արտասանված ընդհանուր զինված ապստամբութեան կոչը...

Նախագահը կանգնեցնում է խօսողին և նկատում է, որ նմանօրինակ կոչեր Դումայում չեն արտասանվել։

Կիլեպօվսկին օրինակ է բերում ստենօգրաֆիական հաշիւները։ Կիլեպօվսկին շարունակում է պաշտպանել մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութեան սկզբունքը։

Ժամը 4 և 12 րոպէին Դուման պատգամաւորների բաց ձայնատւութեամբ ձեռնամուխ է լինում ագրարային մասնաժողովի ընտրութեան։ Ժամը 5 և 8 րոպէին թերթիկները յանձնելը վերջանում է։

Պուրիշկևիչը դահլիճի խորագոյն լռութեան մէջ մի երկար ճառ է արտասանում՝ ի պաշտպանութիւն ազնուականութեան, իբրև հողատէրերի դասի. ապացուցանում է, որ հողազրկութիւնը չէ, որ գիւղացիական աղքատութեան գերիշխող պատճառ է հանդիսանում, մանրամասն կանգ է առնում անտառատնտեսութեան գազանային գործավարութեան վրա։ Վերջում անցնելով մտցրած կուսակցական օրինագծերին, նրանց լուրջ չէ գտնում նոյնիսկ սօցիալիստական տեսակէտից, կշտամբում է լեհերին, որ ցանկանում են ագրարային հարցի լուծումը յետաձգել մինչև աւտօնօմիա ստանալը, գտնելով որ այդօրինակ ցանկութիւնը նոյնն է, ինչ որ նրա «ադ-կալէնդաս-գրէկաս» յետաձգումը, կարծում է, որ լեհ ժողովուրդը միաբան է ռուս ժողովրդի հետ այն պատճառով, որ ռուս կառավարութիւնը, չը հաշւելով Մուրավիէվի ժամանակները, միշտ ընդ առաջ է եկել լեհական ժողովրդի տեղական կարիքներին բաւարարութիւն տալու։ Ամփոփելով իր ասածները, գտնում է, որ ստիպողաբար գրաւելը անթոյլատրելի է. սեփականութեան իրաւունքի խախտելը միևնոյնն է, թէ կողոպտել մեծ ճանապարհի վրա. ագարակային տնտեսութիւններ ստեղծելը ցանկալի է, հարկաւոր է ներքին բարգաւաճում, հողից օգտվելու շրջանը ընդլայնել պէտք է ինքնակամ համաձայնութիւններով։

Դումայի մի խումբ անդամների առաջարկութեամբ կրկին հարց է բարձրանում դատապարտել և պարսաւանք յայտնել քաղաքական սպանութիւններին։

Յայտարարվում է մի առաջարկ՝ ընդհատել Դումայի նիստերը Զատկի առթիւ ապրիլի 10-ից մինչև մայիսի մէկը, մասնաժողով ընտրել ընդհանուր պարտադիր ուսման կառավարական օրինագիծը քննելու համար, հարցապնդում անել Կովկասի Փոխարքային—մի շարք Կովկասի համար անհրաժեշտ բարենորոգումների մասին։

Վաղը քննվելու են մի շարք հերթական հարցապնդումներ։

Նիստը փակվեց ժամը 6 և 20 րոպէին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօսկվա, մարտի 7-ին

Կարդացի «Մշակ»-ի № 39-ում պ. Լօրիկի թղթակցութիւնը Գօրիսից, որում նա Դաշնակցութեան տխուր գործունէութեան մի օրինակ հրապարակի վրա է դնում։ Կարդացի, բայց ակամայից յիշեցի նոյնանման մի դէպք ևս, որ պատահել էր ինձ հետ յունվար ամսում Շուշում։

Մի գեղեցիկ օր, Շուշու գլխաւոր փողոցներից մէկով, երկու ծանօթ անձանց հետ, անցնում էի։ Քաղաքային զբօսավայրի մօտ զինւորական հիւանդանոցից ոչ հեռու, մի հասարակ կին մօտենալով և յանձնելով մեզ թղթի մի կտոր, խնդրեց ցոյց տալ (համաձայն գրութեան) թէ որտեղ պէտք է գնայ, ում պէտք է դիմէ։ Այդ թղթի վրա մատիտով գրված էր միմիայն 8 հոգի և, եթէ չեմ սխալվում, № 100։ Ինչպէս ընթերցողը տեսնում է, դրանից, ի հարկէ, ոչինչ չէր կարելի հասկանալ, այնպէս որ ես ստիպված էի դիմել այդ կնոջ մի քանի հարցումներով —թէ ինչ է կամենում, ում հետ գործ ունի։ Խեղճ ու կրակ կինը, որ երկար ժամանակ մտատանջութեան մէջ էր, վերջապէս ասաց. «Մունք 8 հոգի ընք, մի կտոր հաց չօնիմ, որ երեխորցս կերակրեմ։ Էն դաշնակականներ մ, հինչ մ, ծրտեղ են. անցեալ օրը եկալ ըն մեր չէնը,—Քարինտակը (Շուշուց 4—5 վ. հեռաւորութեան վրա գիւղ) և հաց չունեցող մարդկանց անունները գրալ ու ասալ, որ գանք Ղալէցը (Շուշուց) ալեր տանենք։ Ջունեցողներից մինն էլ ես ըմ, ալերը իրանք են տալու. գիւղում չէս հիշտեղ են ապրում»։

Կնոջ «դաշնակականներ» խօսքը բաւական էր հասկանալու համար, թէ խօսքը ում մասին է և բանը ինչումն է։ Դաշնակցութեան Շուշու ագէնտները, ինչպէս երևում է, նման Ղարադշլաղ գիւղի, գնացել էին Քարինտակ գիւղը և գիւղացիների մէջ պրօպագանդա արել, որ սոված ու քաղցած գիւղերին Դաշնակցութիւնն է օգնութեան հասնելու, որ չքաւորները ալիւր կարող են ստանալ Դաշնակցութեան Շուշու մարմնից։ Ես այդ կնոջ հասկացրի, որ չքաւորներին և սովի ճանկերում տառապող գիւղացիներին ալիւր բաշխում է միմիայն Նպաստամատոյց Յանձնաժողովը, ուստի անհրաժեշտ է դիմել կամ կօնսիստօրիային կամ Յանձնաժողովի պահեստին։ Իմ զարմանքը խիստ մեծ էր, երբ այդ գեղջկուհին պնդեց, որ իմ ասածը սխալ է, Դաշնակցութեան տեղական մարմնից պէտք է ալիւր ստանալ, նրանք են մեզ համար մտածում, առանց նրանց չենք կարող ապրել և այլն... Կնոջ թողինք և հեռացանք

Կովկասի ամեն մի խուլ անկիւնում փող փչել և յայտարարել, որ Դաշնակցութիւնն է հայ ժողովրդին պաշտպանել հայ-թուրքական ընդհարումներից, որ նա է մեր թշուառ ժողովրդի ապաւէնը, որ առանց Դաշնակցութեան հայ ժողովուրդը ապրել չէ կարող,—այդ խումբապետների սովորական ֆրազն է, այն հին երգը, որ տարիներ շարունակ երգում են նրանք մեր մռայլ իրականութեան մէջ։ Հասել է ժամը սակայն, երբ հայ ժողովուրդը քաջ գիտենալով իր բարեկամին ու թշնամուն, լաւ գիտելով իր շուրջը, գիտէ թէ ինչ է կատարվում իր կեանքում և ինչ պէտք է անէ այսուհետև ապագայում։

Ժամանակը հասել է, երբ մեր հասարակական զանազան ասպարէզները գրաւած բազմաթիւ դաշնակցական բախտախնդիրներ ու պրօտաբօյներ տեղի պէտք է տան և հանգիստ թողեն մի բուռն տանջված և հալածված ժողովրդին...

Բոլոր բռնութիւններին, ճնշումներին և խայտառակ դէպքերին, որ ստեղծել են դաշնակցական շէֆերն ու ագէնտները, վերջ տալու միակ ուղին այդ է, ամենազօրեղ միջոցը «լիկվիդացիայի» մէջ է...

Ոսկու-Ջօն

—

Թաւրիզ, մարտի 26-ին

«Մշակ»-ի № 55-ում «Իրօ» ստորագրութեամբ Թաւրիզից գրված մի յօդուածի հեղինակը ինձ են համարում մի շարք դաշնակցականներ և սօցիալիստ-հնչակեաններ. սրանով պարտք եմ համարում յայտնել դրանց, որ ես չեմ այդ յօդուածի գրողը։

Ներսէս Գրիգորեան

—

Ղարադշլաղ (Զանգ. գաւ.), մարտի 20-ին

Շուշու Նպաստամատոյց և Կուլտուրական խառն Յանձնաժողովի միջոցով ստացանք պ. Արշակ Ղուկասեանցի ուղարկած 500 պուդ ալիւրը քաղցած ղարադշլաղցիներին բաժանելու համար։ Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը յիշեալ պարոնին, որ գէթ ժամանակաւոր կշտացրեց սովի ճիրաններում տանջվող հարիւրաւոր գիւղացիներին։

Ի դիմաց Ղարադշլաղ գիւղի շտեմարանի հոգաբարձութեան՝ Ա. Զալիեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ նպաստ տալու սերմացու և ուտելու համար Ղազախի 23 գիւղերին 90 809 րուբլի և նոյն գաւառ Իծողէն գիւղի տնտեսութիւնը վերականգնելու համար—4100 րուբլի։

—

Գանձակի նահանգապետի հաղորդագրութեան համաձայն Ղազախի գաւառի 36 գիւղերի հողերում մեծ քանակութեամբ դաշտամկներ են երևացել 13,534 դեսեատին տարածութեան վրա։ Թէև այդ մկներին ոչնչացնելու միջոցներ արդէն ձեռք են առնված, բայց և այնպէս նրանք ցանքսերին և խոտերին մեծ վնասներ են պատճառել և պատճառում, և տեղական ազգաբնակութիւնը պէտք է այժմ նոր ցանքս անէ մկների ոչնչացրած դաշտերում։ Վերջին ժամանակներս գաւառի շինական հասարակութիւնների ոչխարները մեծ քանակութեամբ ոչնչանում են։

—

Կովկասի Փոխարքան թոյլատրել է դրամական նպաստ (մօտ 6000 րուբլի) տալ Գանձակի ծայրաթաղերի հայ-թուրքական ընդհարումներից վնասված ազգաբնակութեան ի հաշիւ այն տուգանքների, որոնք գանձվում են Գանձակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի տրամադրութեան տակ։

—

Մեզ հաղորդում են, որ Հայոց Բարեգործ. ընկերութիւնը իր նիստում, որը կայացել է ապրիլի 1-ին, որոշել է շինութեան հարցը յետաձգել առաջիկայ տարեկան ընդհանուր ժողովին, որպէսզի անդամները հնարաւորութիւն ունենան աւելի մօտ ծանօթանալու այդ խնդրի հետ. իսկ ընկերութեան վարչութիւնը վաղօրօք կուղարկի անդամներին իր զեկուցումը տպած։

—

Կովկասի քաղաքացիական մասի օգնական գաղտնի խորհրդական Ի. Վ. Միցկէվիչը վերադարձել է Թիֆլիս Բագու կատարած ճանապարհորդութիւնից։

—

Քաղաքային վարչութիւնը ապրիլի 2-ին տեղեկացրել է Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան, որ արդէն կազմված է Նախալօվկայի էլէքտրաքարշի կառուցման նախագիծը, որի համար խնդրում է երկաթուղային կամուրջի տակի փողոցը 0,7 մետրով փորել՝ մեծ վագոնները անարգել անցնելու համար։

—

Քաղաքի և էլէքտրաքարշի ընկ. միջև կապված պայմանագրի համաձայն ապրիլի 1-ից պէտք է մտցնվի ամառնային երթեւեկութիւն, որի համաձայն վերջին վագոնները ծայրի կայաններից պէտք է պարկ դիմեն գիշերվայ ժամը 12-ին. սակայն էլէքտրաքարշի ծառայողները «առայժմ հարկաւոր չեն համարել» մտցնել ամառնային երթեւեկութիւն։

—

Ապրիլի 1-ից էլէքտրաքարշի անոնիմ ընկերութիւնը գործադրութեան է հանել 50 մեծ և 29 շաղկապվող վագոններ։ Ընկերութեան արհեստանոցներում վերանորոգութեան համար մնում են դեռ 17 մեծ վագոններ։

—

Շաբաթ երեկոյեան նշանակված էր Կովկասի Իրաւաբանական ընկերութեան նիստը։ Ընկերութեան նախագահ պ. Շեվալևն և քարտուղար պ. Տովեանեանը սպասում էին երկար ժամանակ ընկերութեան անդամներին, բայց երևացին միայն 3 հոգի, և այդ պատճառով ժողովը չը կայացաւ։

—

Ապրիլի 2-ին 6-րդ քաղաքամասի ոստիկանատնից դուրս են բերել ձախ թիկունքից դանակով ծանր վիրաւորված Տէր-Գրիգորեանին։

—

Թիֆլիսի արքունական թատրոնի վարչութիւնը պայման է կապել թատրոնը հետևեալ սեզոնին տալ ընդհ. օպերային արտիստների ընկերութեան ներկայացուցիչ Բօրօդային, որը մարտի 31-ին Թիֆլիսից մեկնեց Կիեվ խումբ կազմելու նպատակով։

—

Թիֆլիսի վաճառականներից շատերը հետաքրքրվում են այն հարցով, երբ նրանց կը վերադարձվեն այն պօստային 7 կօպէկանոց նամականիշները, որոնք մի քանի խանութներում երեւան հանած կեղծ նամականիշների շնորհիւ գրաւվել են։ Նրանք յայտնում են, որ խլված նամականիշները նրանք մօտ օրերս գնել են Թիֆլիսի պօստ-հեռագրատան գրասենեակում և ոչ մի ձևով կեղծ չեն կարող լինել։

—

Ապրիլի 2-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Սօլդատսկի բազարում էլէքտրաքարշի վագոնը ճխլել է Բօյաճեանի կօշիկների արհեստանոցի գլխաւոր վարպետ Միրօշնիկօվին։

—

Երկուշաբթի, ապրիլի 2-ին Բաթումում լոյս տեսաւ «Батумскій Листокъ»-ի առաջին համարը Լ. Գ. Սանդեցկու խմբագրութեամբ։

—

Թիֆլիս կայարանի կառավարիչ Ֆ. Ֆ. Կրէյսլէրը, որը կայարանում փետրվարի 18-ին վիրաւորվել էր երկու գնդակներով, ապրիլի 1-ից ստանձնել է իր պարտականութիւնները։

—

Այն լուրերը, որ իբր մօտիկ ապագայում սպասվող քաղաքային ինքնավարութիւնների բարենորոգումների պատճառով Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնները յետաձգվելու են, չարդարացան։ Ընտրութիւնները կը կայանան որոշված ժամանակամիջոցներում։ Ընտրողների ցուցակները հրատարակելը կը վերջանայ ապրիլի 13-ի մօտերը։

—

Ընտանիքների ցուցակները կազմելը արագացնելու համար քաղաքային վարչութիւնը հրաւիրել է կրկին 20 գործավարներ։

—

Նորաշէնի երեցփոխ ընտրվել է Գ. Զ. Թամամշեանը։

—

Այսօր երեկոյեան ժամը $6^1/_2$-ին քաղաքային վարչութիւնը հրաւիրում է ընտանիքները ցուցակագրելու համար նոր ընդունված 24 հոգու, որոնք կը փոխարինեն այժմ աշխատողներին։

—

Ապրիլի 2-ին, երեկոյեան ժամը 9-ին Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ կնքել են «Ժամանակ» լրագրի խմբագրութիւնը և գրասենեակը։

—

Ապրիլի 3-ին, առաւօտեան ժամը 5-ին Ցխցկի միջանցքում (6-րդ քաղաքամաս), Ղազախի բնակիչ Ալի Ախվերդի-օղլու բնակարանում ոստիկանութիւնը գտել է 6 հատ ցինկեա արկղներ, որոնց մէջ կար 1800 հատ 3 գծանի հրացանների փամփուշտներ և 178 հատ ատրճանակի փամփուշտներ, 1 հատ 3 գծանի հրացան և մէկ հատ մեծ դաշոյն։ Ձերբակալված են բնակարանատէր Ալի Ախվերդի-օղլին և նրա բնակարանում բնակվող, Զուգդիդի գաւառի բնակիչներ՝ Ակակիա Կուչուլարիան և Երաստ Կալանդարիան։ Դրանից յետոյ խուզարկութիւն է կատարվել նոյն Ալի Ախվերդի օղլիի թէյատան մէջ, ուր գտել են մէկ տոպրակ լիքը գողացված իրեր։ Ձերբակալվածներին ուղարկել են կոմենդանտսկի վարչութիւն։

—

Թիֆլիսի նահանգապետը խնդրել է քաղաքագլխի պաշտօնակատարին, որպէսզի նրանից կախված բոլոր հարկաւոր միջոցները ձեռք առնվի շտապով քննելու քաղաքի ելևմտի նախահաշիւը, որպէսզի իր ժամանակին իրան ներկայացվի։

—

Թիֆլիսի գիշերօթիկ ապաստարանների կառավարիչները և ֆելդշերները դիմել են քաղաքային վարչութեանը, խնդրելով աւելացնել իրանց ռոճիկները՝ կառավարիչներին տալ 50 րուբլի, փոխանակ 40-ի, որ ստանում են այժմ, ֆելդշերներին մինչև 20 րուբլի, փոխանակ 10 րուբլու։

—

Ապրիլի 5-ից Թիֆլիսում կը սկսէ հրատարակվել նոր վրացերէն լրագիր «Լախվարի» անունով։

—

Կուտայիսից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ ազնուականների նահանգական ժողովը որոշել է պատշաճաւոր շրջաններից խնդրել, որպէսզի միջոցներ ձեռք առնվեն հողատէրերի գոյքի պաշտպանութեան համար այն դէպքում, եթէ գաւառներում ագրարական անկարգութիւններ սկսվելու լինեն։ Օրլովի նահանգի Դմիտրօվսկի և նրա հարևան Սէվսկի գաւառում գիւղացիները այժմ հրաժարվում են վճարել պետական հարկերն ու զեմստվային տուրքերը։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Մինգրելիայի հոգևոր դպրոցի աշակերտ, քահանայի որդի, 14 տարեկան Օրեստ Իօսավան, ցածրահասակ, ներկայ տարվայ փետրվարի 27-ին մեկնել է Նօվօ-Սենակիից Թիֆլիս իր հօրեղբօր մօտ գալու նպատակով և մինչև այժմ յայտնի չէ թէ ուր և ում մօտ է գտնվում։ Նրա ուր լինելու մասին տեղեկութիւն ունեցողներին աղերսագին խնդրում եմ հաղորդել Նօվօ-Սենակիի (Քութայիսի նահ.) հոգևոր դպրոցին կամ Թիֆլիս՝ Դաւիդօվսկի հրապարակ, Պօտօչնի պերէուլ. տուն № 5. բնակ. Իօսավայի, քահ. Պրօխոր Իօսավային»։

—

Քութայիսում, մարտի 30-ին և նախորդ օրերը ուժեղացրած պահակախումբը խուզարկութիւններ է կատարել փողոցներում։ Գիշերը մի քանի հիւրանոցներում ամբոխային կալանաւորութիւններ են կատարվել։ Բանտարկված են մի քանի անձեր։ («Зак.»)

—

Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտում դասախօսութիւններ են կարդացվում, որոնց կազմակերպել է մանկաբարձուհիների ընկերութիւնը։ Դասախօսութիւնները կարդացվում են երկուշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 7-ին, երեխաների և կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան վերաբերեալ։ Կողմնակի մարդկանց թոյլատրվում է յաճախել։ Երկու սեռի անձինք էլ կարող են նախանձաւոր անդամներ լինել, վճարելով 3 րուբլի։ Կարելի է մաս-մաս վճարել։

—

Ապրիլի 2-ին Բագւում լոյս է տեսել «Понедѣльникъ» լրագրի 1-ին համարը։

—

Ռօստօվում-Դոնի վրա ոստիկանութիւնը ձերբակալել է եղբ. Բաղչայեանններին, որոնք փորձել են աստիճանաբար սաղացնել Երևանի պետական գանձարանի պօստը տեղափոխելիս գողացած 80 հազար րուբլու թղթադրամները, որոնք պէտք է ուղարկվէին Պետերբուրգ ոչնչացնելու նպատակով։

—

Սղնախից մեզ հաղորդում են, որ Վէլիսցիխէում «մենինգիտ» հիւանդութեան մի քանի դէպքեր են եղել։

—

Նախկին Պետական Դումայի անդամ Գօմարթելին, որը բանտարկված էր, մարտի 27-ին բանտից ազատ է բաց թողված այն պայմանով, որ նոյն գիշերը մեկնէ իր բնակավայրը՝ Բօրժօմ։

—

Մօտ օրերս Փօթիում կը սկսէ լոյս տեսնել ռուսերէն շաբաթաթերթ, «Приріонскій Край» անունով, առաջադէմ ուղղութեամբ։

—

Նոր լոյս տեսած «Былое» թերթի վերջին համարը գրաւվել է։

—

Սաղախլօյից գրում են. «Մարտի 31-ին Սաղախլօ-Ախթալա կայարանների միջև յայտնի աւազակ Արութ Զուբինօվը իր երեք հոգուց բաղկացած աւազակախմբով ցանկանալով յարձակվել բանւորական գնացքի վրա, որի մէջ գտնվում էր երկաթուղային դրամատարը, հարցնում է հովիւ Արութ Վարդամօվին—շուտով կը գայ գնացքը, և երբ նա պատասխանում է, որ չը գիտէ, կրակում է նրա վրա։ Վարդամօվը իր հերթին կրակում է և սպանում Զուբինօվին։ Պահակները ձերբակալում են երեք աւազակներից մէկին։ Այդ բանից առաջ Զուբինօվը Սանահին կայարանում կողոպտել էր ճանապարհի վարպետին և վիրաւորել էր նրան և դէպօյի կառավարչին։

—

Հռօմից «Сегодня» լրագրին հեռագրում են, որ Գօրկու առողջութիւնը ամենևին անյուսալի չէ, ինչպէս այդ մասին գրել էին արտասահմանեան լրագրները։ Գօրկուն արգելել են աշխատել և առաջարկել են երկարատև հանգստութիւն պահպանել։ Յոյս կայ որ կառողջանայ։

—

Օդեսսայից «Сегодня» լրագրին հեռագրում են, որ զօրքերի գլխաւոր հրամանատար Կաուլբարսը մայիսին երկարատև արձակուրդով գնալու է արտասահման։

—

Ինչպէս հաղորդում են «Зак.» լրագրին, Սաղախլօ կայարանում սպանվել է աւազակ Վարդանեանը։

—

Վարշավայից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ Լօձի բանւորական թաղերի փողոցներում ոչ ոք չէ նկատվում։ Բանւորները այնպէս են ահաբեկված անվերջ սպանութիւններով, որ չեն համարձակվում նոյն իսկ ծայրայեղ կարիքի մէջ անգամ հեռանալ իրանց բնակարաններից։ Կուսակցութիւնների բոլոր ջանքերը՝ վերջ տալ այդ եղբայրասպան պատերազմին հանդիպում է երկու կողմերի թշնամութեան։ Բենդենի շրջակայքում տեղի ունեցած սպանութիւնների և կողոպուտների պատճառով 5 հոգի մահվան են դատապարտված, որոնցից 3-ը կօզակներ են, Դօնեան 4-րդ գնդից, իսկ երկուսը գիւղացիներ։ Քննութիւնը հաստատել է, որ նրանք կատարել են 20-ից աւելի զինված յարձակումներ և կողոպուտներ. մնացեալ մեղադրվողներից 5 հոգի կալանաւորական վաշտերի են դատապարտված։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլի 2-ին, երեկոյեան ժամը $6^1/_2$-ին Միքայէլեան փողոցում իգական 2-րդ գիմնազիայի դիմաց Իշխ. Միխայիլ Ջելօկաեվը, ցանկանալով նստել էլէքտրաքարշի վագոնը, ընկել է ետևի վագոնի անիւների տակ և ճխլվել է։ Ջելօկաեվը, Միքայէլեան հիւանդանոցը հասցնելուն պէս, վախճանվել է։

—

Ապրիլի 2-ին, երեկոյեան մօտ 8 և կէս ժամին մի անյայտ չարագործ ատրճանակի հարուածով սպանել է Թիֆլիսեցի Միքայէլ Լազարեվին։ Լազարեվի դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցը։ Մարդասպանը անյայտացել է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ

Ռեֆերենդում և օրէնսդրական նախաձեռնութիւն Շվէյցարիայում

II

Ժողովրդապետութեան սկզբունքը գործնական արտայայտութիւն գտաւ ռեֆերենդումի և ժողովրդի օրէնսդրական ինիցիատիվի կամ նախաձեռնութեան մէջ, որոնք Շվէյցարիայի քաղաքական կազմի հիմնաքարերն են կազմում և որոնք գեղեցիկ ընդունելութիւն ունեցան Անգլիայի աւստրալիական գաղութներում և Հիւսիսային Ամերիկայի մի քանի նահանգներում։ Համարեա առանց բացառութեան բոլոր յեղափոխական—սօցիալիստական կուսակցութիւնները ռեֆերենդումի և օրէնսդրական նախաձեռնութեան պահանջը յիշում են իրանց ծրագիրներում։ 1900 թ. Պարիզի միջազգային համաժողովը «ի նկատի առնելով, որ գերագոյն կամ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է միայն ժողովրդին, և որ անմիջական ժողովրդական օրէնսդրութիւնն այդ գերագոյն իշխանութեան սեպհականութիւնն է, յայտարարում է ապահովել ժողովրդի այդ իրաւունքները ռեֆերենդումի և օրէնսդրական նախաձեռնութեան միջոցով»։ Կաուցկին իր «Parlamentarismus գրքում մատնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ «Շվէյցարիայում դասակարգերի մէջ գոյութիւն ունի մի տեսակ հաւասարակշռութիւն», աւելացնում է. «Շվէյցարացի ընկերներն այնքան երջանիկ են, որ ներկայումս ունեն ամեն բան, ինչ որ կարելի կը լինէր պահանջել քաղաքական իրաւունքների վերաբերմամբ։ Եթէ նրանք ուզում են գործել դրական ուղղութեամբ, բաւական է հանդէս բերեն գործնական եռանդ, չը բաւականանալով ագիտացիայով և ցոյցերով, մի քիչ էլ բարելաւեն ու յարդարեն քաղաքական շէնքը, և ահա ամեն բան պատրաստ է»։ Եւ իրօք, յանձին ռեֆերենդումի և օրէնսդրական նախաձեռնութեան Շվէյցարիան իր քաղաքացիների համար ունի այնպիսի դեմօկրատիկ հաստատութիւններ, որոնք շատ ժողովուրդների նախանձն են շարժում։

Ռեֆերենդում ներկայումս նշանակում է ժողովրդական մի այնպիսի իրաւունք, որով նա անմիջական ընդհանուր քուէարկութեամբ կարող է ընդունել կամ մերժել ներկայացուցչական ժողովի կողմից մշակված և ընդունված ամեն մի օրէնք, լինի նա հիմնական (սահմանադրական), թէ սովորական։ Ռեֆերենդումը չը պէտք է շփոթել veto-ի հետ. երկուսի մէջ կայ աչքի ընկնող տարբերութիւն։ Ռեֆերենդումի դէպքում օրէնքի բաղդը որոշվում է մասնակցող քաղաքացիների ձայների մեծամասնութեամբ. իսկ veto-ն ի նկատի ունի բոլոր իրաւունակ քաղաքացիներին։ Ուրիշ խօսքով, այն քաղաքացիք, որոնք չեն մասնակցում ռեֆերենդումին, բոլորովին կորցնում են իրանց ձայները, այն ինչ veto-ի դէպքում քուէարկութեան չը մասնակցելը լռելեայն համաձայնութեան նշան է։ Ռեֆերենդում խօսքի ծագումը պէտք է որոնել այն արտայայտութեան մէջ, որը գործածվում էր Շվէյցարիայի հին դաշնակցական ժողովում, ուր առանձին կանտօնների պատուիրակները գնում էին ad audiendum et referendum, այսինքն, լսելու որոշումներն և այդ մասին վերադարձին հաշիւ տալու (referere) համաքաղաքացիներին։ Տակիտոսի նկարագրած հին գերմանացիների նման շվէյցարական ինքնավար համայնքներում միայն աննշան հարցերն էին լուծվում ծերակոյտի խորհրդում, իսկ կարևորների լուծմանը մասնակցում էին համայնքի բոլոր անդամները։ Ապագայում առանձին համայնքներից առաջացան կանտօնները և կանտօնների դաշնակցութիւնը. սակայն օրէնսդրութիւնը շարունակում է մնալ իրան ժողովրդի ձեռքում, որն ամեն մի անհրաժեշտ դէպքում «համայնական» կամ «շրջանային» ժողովներ էր գումարում։

Բաց երկնքի տակ հաւաքվում էր ժողովուրդը, լսում էր կանտօնի խորհրդի առաջարկած օրէնքների նախագծերը և սոսկ ձայների մեծամասնութեամբ ընդունում էր կամ մերժում նրանց։ Պատմական այս փոքրիկ ակնարկը ցոյց է տալիս, որ ռեֆերենդումը մի մըտացածին բան չէ, քաղաքագէտ գլխի հնարած, այլ իր սկիզբն առնում է շվէյցարացիների ազգային հին սովորոյթներից, որոնց հիման վրա ժողովուրդն էր իր բաղդի անմիջական տնօրէնը։

---

*) Հասարակութեան մէջ ներկայացումը աշակերտական գործ տարածված լինելով՝ դժբաղդաբար թէ բարեբաղդաբար՝ մեծերից շատ քչերն էին եկել, մեծ մասամբ մանուկներ, պատանիներ էին։

*) Վարդապետի մէկին մի հարցասէր հարցնում է երկինքի բարձրութեան չափը. որպեսզի տգէտ չը համարվի նա՝ վեր է առնում մի կծիկ թել և ասում «սրա չափն է»։ Երբ չէ հաւատում հարցողը՝ վարդապետն աւելացնում է. «կասկածում ես, առ կծիկը և գնա չափիր...»։

Սակայն սովորոյթի այդ իրաւունքը կազմակերպված օրէնքի ոյժ է ստանում առաջին անգամ 1848 թ. սահմանադրութեամբ։ Այստեղ արդէն ռեֆերենդումը հիմնաբանված է Ժ.-Ժ. Ռուսսոյի ժողովրդի իրաւունքների վարդապետութեամբ։ Մեծ փիլիսոփան զզուանք էր տածում դէպի ներկայացուցչական կառավարութիւնը. իր «contat social» ում նկատում է թէ անգլիացիք իրանց գովաբանված ազատութեամբ իրապէս ազատ չեն, որովհետև նրանք օգտվում են իրանց ազատութիւնից միայն պարլամենտի ընտրութիւնների ժամանակ, այնուհետև բոլորովին ենթարկվում են նոյն պարլամենտի իշխանութեան մինչև միւս ընտրութիւնները և այդպէս շարունակ։ Նա յայտնում է, որ իսկական ազատութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է, որ օրէնքնե հրատարակէ ինքը ժողովուրդը։ Թէև չէր իմանում, թէ ինչ ճանապարհներով կարելի է այդ բանը գլուխ բերել մեծ պետութիւններում, որտեղ անհնարին է բոլոր քաղաքացիներից ժողով գումարել։ Ռուսսոյի այս մտքերը խոր արմատ են ձգում իր հայրենակիցների գլուխներում, որպէսզի շվէյցարացին, որ ի բնէ օժտված է տեսութիւններին յարմարագոյն կիրառութիւն գտնելու ընդունակութեամբ, կարողանում է նաև այդ մտքերին լաւագոյն գործնական արտայայտութիւն տալ յանձին ներկայիս ռեֆերենդումի։

Շվէյցարիայում գոյութիւն ունեն երկու տեսակի ռեֆերենդում. Մէկը կամաւոր է, ֆակուլտատիւ, իսկ միւսը պարտադիր։ Առաջին կարգի ռեֆերենդումը հանդէս է գալիս այն ժամանակ, երբ որոշ թւով իրաւունակ քաղաքացիներ պահանջում են օրէնքն ենթարկել ժողովրդի քուէարկութեան։ Երկրորդ տեսակի ռեֆերենդումը, ինչպէս կոչումն էլ ցոյց է տալիս, պահանջում է անպայման ժողովրդական հաստատութիւն, առանց վերջինիս կողմից հարց բարձրանալու։ Պարզ է, որ պարտադիր ռեֆերենդումն աւելի ռամկավարական է, որովհետև ամեն մի օրէնքի հրատարակութեան համար պահանջվում է ժողովրդի մասնակցութիւնը։

Շվէյցարիայի բարձրագոյն օրէնսդրական և վարչական ատեանի, դաշնակցական խորհրդի համար ռեֆերենդումը պարտադրական է սահմանադրութեան մէջ մտցնելիք ամեն մի փոփոխութեան համար, առանց բացառութեան։ Ֆակուլտատիւ ձևով ռեֆերենդումը կիրառվում է ամեն մի որոշման և օրէնքի համար, որը ընդհանուր բնաւորութիւն ունի, եթէ միայն քուէարկութեան պահանջ են դնում 30,000 քաղաքացիներ, կամ ութը կանտոն միասին։ Սակայն եթէ որոշումը կամ օրէնքը անյետաձգելի, ստիպողական բնաւորութիւն ունի, դաշնակցական խորհուրդը կարող է ռեֆերենդումի պահանջն անհետևանք թողնել (Սահմանադրութիւն, 89 յօդ.)։ Որպէսզի ժողովուրդը հնարաւորութիւն ունենայ որևէ օրէնք կամ որոշում ռեֆերենդումի ենթարկել, տրվում է 90 օր ժամանակ, այդ միջոցն անցնելուց յետոյ օրէնքը դառնում է պարտադիր և գործածութեան մէջ մտնում։

Հետևեալ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ժողովուրդը բաւական գիտակցօրէն և լայն չափերով գիտէ օգտվել իր այդ իրաւունքից։ 1875 թ. մինչև 1905 թ. դաշնակցական խորհուրդը հրատարակել է 219 օրէնք, որոնցից 24 ենթարկվել է ռեֆերենդումի, այսինքն միջին թւով իւրաքանչիւր 9 օրէնքից մէկը։ Այդ 24 օրէնքներից ժողովուրդը հաստատել է 9, մերժել 15։ Միևնոյն ժամանակամիջոցում դաշ. խորհուրդը առաջարկել է սահմանադրութեան մէջ մտցնել 13 փոփոխութիւններ, որոնցից 9-ը ընդունվել է, 4 մերժվել։ (Stenli. Bundesstaatsrecht 15—16)

Բ. Բաղդասարեան

Ցիւրիխ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 19 մարտի

«Ժուռնալիստների միութեան բարձրացրած հարցը Մ. Տէր-Օհանեանի սպանութեան առիթով ցաւալի տպաւորութիւն թողեց մեզ վրա. բայց արդեօք միութեան կաջողի ճշմարտութիւնը պաշտօնապէս երևան բերել, քանի որ նա գործ ունի այնպիսի գործողների հետ, որոնց նշանաբանն է «բռնութիւն և սուր»։ Ո՞վ կը համարձակվի հակառակ այդ բանակի ճշմարիտ ցուցումներ տալ. կամ թէ ինչով կարելի է ապահովել ճշմարիտ վկայութիւն տւողների կեանքը։ Ահաւասիկ քննութեան առնելու կարևոր խնդիրները։ Ժուռնալիստների բարձրացրած հարցը այնքան լուրջ և ծանր խնդիր է, որի շահելուց կամ տանուլ տալուց կախումն կունենան ապագայում շատ լուրջ դրութիւններ։ Եթէ հաստատել կարողացան այն, ինչ որ ճշմարտութիւն է համարվում «Մշակ»-ում և յանցաւորը իր արժանի պատիժը ստացաւ, դրանով որքան բարեբախտ կացութիւն է ստեղծվում ամեն մի գրիչ առնողի համար, որը այսուհետ համոզված կը լինի, որ մարդ կարող է ճշմարտութիւնը գրել առանց քաշվելու և հակառակ դէպքում «իշի նահատակ» չի դառնալ։ Իսկ եթէ Տէրը մի արասցէ, ճշմարտութիւնը երևան չեկաւ և յանցաւորը կարողացաւ բոլորովին արդար երևան գալ, ասացէք խնդրեմ, այդպիսի հանգամանքներում արդեօք շատերը կը համարձակվէ՞ն այսուհետ մի բան գրել թերթերում, նոյնիսկ կեղծված ստորագրութեամբ. չէ՞ որ ոճից կամ զանազան ենթադրութիւններով կարող է իմացվել գրողի ով լինելը, և հետևանքը էլի նոյնը... Այո, շատ լուրջ գործի է ձեռնարկել «Ժուռնալիստների միութիւնը», որը պէտք է տոկուն համբերութեամբ քննէ գործը և ուշ թէ շուտ ճշմարտութիւնը երևան բերէ իր բոլոր մանրամասնութեամբ, որով իր սկզբնաւորութիւնը պսակած կը լինի մի գործնական կենդանի պսակով։

—

Մօտ երկու տարի առաջ վախճանվեց դոկ. Գ. Ասլանեանի կինը և նրա ունեցած ժառանաւոր կահ կարասիքը և արդուզարդը հասաւ ամուսնուն։ (Դոկ. Ասլանեանը անգլիական հպատակ է և անգլիական օրէնքով կնոջ ունեցած սեփականութիւնը մինչև 500 լիրա յետ մահվան հասնում է ամուսնուն, նոյնիսկ եթէ զաւակներ էլ ունենայ)։ Ի դէպ ասեմ, որ հանգուցեալը առաջ ամուսնացած էր պ. Արշակ Նազարբէկեանի հետ, որից ունէր մի զաւակ, որը սովորում էր Թիֆլիսում և որը համարեա միաժամանակ մօր հետ մեռաւ (սպանվելով Թիֆլիսում կոզակների գնդակներից), այնպէս որ ոչ մայրը զաւակի մահը իմացաւ, ոչ էլ որդին մօր մահը։

Դոկ. Ասլանեանը չուզեց օգտվել կնոջ թողածից և մտածեց հանգուցեալի թողածով ի յիշատակ շինել «Արամեան» դպրոցում երեք հատ դասարան. այդ մասին յայտնեց հոգաբարձութեան, որը շնորհակալութեամբ ընդունեց դոկտորի առաջարկը, որովհետև սրանով մի մեծ բարիք է արած լինում մեր մատաղ սերնդին, որը ստիպված է սովորել մի քանի շատ հակաառողջապահիկ դասարաններում, որոնք շինված են մօտ 60 տարի սրանից առաջ։ Այն ուղղութեամբ, որ պիտի շինվեն այդ երեք դասարանները, մնում է բաց երկու դասարանի տեղ ևս. եթէ գտնվէր և մի բարերար, որ հոգար այդ երկու դասարանի ծախքը, այն ժամանակ մի ուղղութեամբ ընկած կը լինէին հինգ դասարաններ և միջի հին շէնքը վերցնելուց յետ ահագին բակ կունենար դպրոցը, որը անհրաժեշտ է ամեն մի դպրոցի։ Ցանկալի կը լինէր, որ եղբարք Նազարբէկեանները, որոնց եղբօր որդին էր հանգուցեալ Յովակիմ Նազարբէկեանը և միակ ժառանգը իրանց հանգուցեալ Արշակ եղբօր՝ ի յիշատակ վաղաթառամ Յովակիմի յանձն առնէին շինել յիշեալ երկու դասարանները, որով իրանք յաւերժացրած կը լինէին իրանց եղբօր որդու յիշատակը, որի մօր յիշատակն էլ արդէն դոկ. Ասլանեանն է յաւերժացնում. այդպիսով կողք կողքի մօր և որդու յիշատակները երկար տարիներ օրհնութեամբ և երախտագիտութեամբ կը յիշվեն թէ մեծերի և թէ մատաղ սերնդի կողմից, որոնք կը դաստիարակվեն այդ շինութեան պատերի մէջ՝ դառնալով պիտանի անդամներ մեր ամայի անդաստանի....։

Իբօ

—

Թաւրիզ, 16 մարտի

Պարսիկներն իրանց նախագծած ծրագրի առաջին մասն իրագործելուց յետոյ Պարսկաստանի մաքսային և պօստային հաստատութիւններում ծառայող բելժիկ պաշտօնակալների նկատմամբ, այսինքն՝ պօստային հաստատութիւնը վերջնականաբար դուրս կորզելուց յետոյ վերջինների ձեռքից, ձեռնամուխ եղան նոյն ծրագրի երկրորդ մասի իրականացման։ Այս յանդուգն գործին ձեռնամուխ եղողներն արդէն մի քանի ամիս էր, որ շարունակ գիշերները համախմբվում էին այս կամ այն անձնաւորութեան տանը և խորհրդակցում էին իրանց գործելակերպերի մասին։ Սրանք այստեղ կայացրած որոշումները միշտ յայտնում էին մայրաքաղաքում գործող յեղափոխականներին և վերջիններից ստանում էին զանազան հրահանգներ։ Ելևմտից մինիստրութեան ղեկը վարող բելգիացի Նաուսի և համայն մաքսատների ընդհանուր կառավարիչ Պրիմի անակընկալ պաշտօնանկութիւնը, սրանց վարկաբեկութեան մէջ ընկնելը չափազանց յաւակնոտ և ըմբոստ զգացմունքներ ներշնչեցին պարսիկների մէջ իրանց վաղեմի տենչալի փափագները և դիմագրաւական միտումներն իրականութիւն դարձնելու։ Այս անգամ գործն սկսվեց ոչ թէ երկրի մայրաքաղաքում, այլ Ատրպատականի կենտրոնում՝ Թաւրիզում։

Ամսիս 14-ին այս քաղաքի մաքսատան բոլոր պարսիկ ծառայողները պարապմունքները վերջացնելուց յետոյ՝ հրատարակում են գործադուլ. հեռացնում են մաքսատան բոլոր ծառաներին և պահապան զինւորներին և դռներն ու դարբասը կողպելով ու կնքելով հեռանում են։ Սրանք իրենց կողմից նշանակում են զինւորներ, որպէսզի հետևեալ օրը ոչ ոք չը գայ մաքսատուն։ Յաջորդ օրը առաւօտեան ժամի 10-ին դիմում են տեղիս առաջնակարգ մուշտէիդ Հաջի-Միրզա-Հասան-Աղայի օգնութեան և բաստ են մտնում Սէիդ-Համզա կոչված մզկիթում։ Կէսօրվայ ժամանակ քաղաքի զանազան մասերում խռովայոյզների կողմից մեծ քանակութեամբ թռուցիկներ ցրվեցին սպառնալից բովանդակութեամբ և կոպիտ լեզւով գրված բելժիկ պաշտօնականների հասցէին ուղղած։ Պարսիկները յիշեալ հռչակաւոր մուշտէիդի հետ միասին գնում են ազգային խորհրդարանը և մի խմբագրական հեռագիր ուղարկում Թեհրան՝ ազգային սահմանադրական խորհրդարանին։ Բելգիացի մաքսապետ Դուտն իր կողմից հեռագրում է Թեհրան և իրերի դրութիւնը ծանուցանում։ Մաքսատան փակման երրորդ օրը մաքսապետը հեռագիր է ստանում Թեհրանից, ընդհանուր մաքսապետից և վաւերացրած արտաքին գործերի մինիստրի ստորագրութիւնով—բարեկամաբար հրաւիրել խռովայոյզ պաշտօնականներին վերսկսելու մաքսատան զբաղմունքները, հակառակ դէպքում բոլորին արտաքսել։ Մաքսապետը հեռագիրն ուղարկում է Ատրպատականի ընդհանուր նահանգապետին, վերջինս էլ քաղաքիս ազգային սահմանադրական խորհրդարանին։ Չորրորդ օրը խռովայոյզ պարսիկները մի հեռագիր են ստանում արտաքին գործերի մինիստրներից պարապմունքները վերսկսելու նկատմամբ։ Երկար բանակցութիւններից յետոյ, մաքսատան փակման գրեթէ ութերորդ օրը, խռովայոյզները տեսնելով իրանց պարտութիւնը և ազգային խորհրդարանի անտարբերութիւնը, այս հիմնարկութեան առաջնակարգ անդամ Հաջի Նիզամ Դովլէի միջնորդութեամբ հաշտվում են և հետևեալ օրը ձեռնամուխ լինում գործի։ Այս իրողութիւնը տեղի է ունենում Թեհրանի ազգային սահմանադրական խորհրդարանի տնօրինութեամբ ցնոր կարգադրութիւն, որ պէտք է մշակվի կառավարութեան և բելժիկների միջև։

Ատրպատականի ընդհանուր կուսակալն ամսիս 16-ին Մամադ-Ալի Շահից ստանում է մի հեռագիր, որով պատուիրում է այստեղ գտնվող արքայական տան սեփականութիւնը կազմող բոլոր զէնքերը հակերի մէջ կապել անմիջապէս, եթէ հնարաւորութիւն կայ, հէնց նոյն օրը ճանապարհել դէպի Թեհրան։ Կուսակալը ճշգրտօրէն իրագործում է իր միապետի ցանկութիւնը։ Քառասուն զէնքերով բեռնաւորված գրաստներ գիշերվայ ժամի 12-ին ծածկաբար դուրս են գալիս միջնաբերդից և ուղևորվում դէպի Թեհրան։ Տակաւին գրաստները Վասմինջ կոչված աւանը չը հասած, այստեղի ազգային սահմանադրական խորհրդարանն իմանում է և իր գործակատարների միջոցով բոլոր ապրանքները յետ բերում Թաւրիզ։ Արքայական սեփականութիւնը գրաւվում է յօգուտ ազգային սահմանադրական խորհրդարանի։ Այս դէպքի լուրն իսկոյն կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ քաղաքում։

Յաջորդ օրը ռուսաց գեներալ-կօնսուլ Պախիտոնովի կողմից մի զեկուցագիր է ստացվում երկրիս կուսակալի ատեանում այս դէպքի առթիւ, հետևեալ բովանդակութեամբ մօտաւորապէս. «Այսօր ես իմ մօտ եղող մարդկանցից հաստատ իմացայ, որ Պարսկաստանի Մամադ-Ալի Շահնշահի անձնական սեփականութիւնը կազմող իրերը մի քանի անյայտ մարդկանց ձեռքով ճանապարհին գրաւվել և յետ է բերվել Թաւրիզ. այս չարամիտ մարդկանց տգեղ արարմունքն անպատիժ է մնում դժբաղդաբար։ Այսպիսի արտասովոր յանդգնութիւն կատարելուց յետոյ, քաղաքումս կարող են տեղի ունենալ ապագայում բազմաթիւ սոյնանման դէպքեր. հետևապէս քաղաքը գտնվում է անապահով վիճակի մէջ, որի առթիւ տեղիս ռուսահպատակ ժողովուրդը կարող է մեծապէս վնասվել. ինձ համար շատ փափագելի է իմանալ թէ Թաւրիզ քաղաքի և նրա կուսակալութեան կառավարչական ղեկը ում է վերապահած և ապագայում տեղի ունենալիք որևէ վտանգաւոր արկածի դէպքում՝ պատասխանատուութիւնն ում վրա է ընկնում»։

Երկրիս կուսակալն այս պաշտօնական զեկուցագիրն ուղարկում է ազգային սահմանադրական խորհրդարան, որի անդամները երկար թարակ խորհրդակցելուց յետոյ մի որոշ եզրակացութեան չեն գալիս, ուստի դիմում են Թեհրանի խորհրդարանին, որից տակաւին պատասխան չէ ստացվել։

Լ. Գէորգեան

ԿԱՆԱՆՑ ՔՈՒԷԻ ՇՈՒՐՋԸ

II

Պր. Տիքինսըն, ազատական մը, երևան բերաւ պարլամէնտի մէջ օրինագիծ մը՝ որով կանայք ևս համահաւասար քուէարկութեան իրաւունքը կունենային ընտրութեանց պահուն։

Առաւել քան քառորդ դարու մը ընթացքին, սա առաջին անգամն էր, որ կը դրուէր կանանց խնդիրը պարլամէնտի առաջ և կարժանանար այնքան լուրջ հարցաքննման։ Բայց վախճանը եղաւ ցաւալի։ Հակառակ անդամներու մեծամասնութեան արտայայտած համակրանքին դուրսը, խնդիրը դատապարտուեցաւ անորոշութեան,—talked out—ինչպէս կըսեն, այսինքն, տրուած լինելով որոշ ժամանակ մը հարցը քննելու, այնքան խօսեցան՝ որ ատենը լրացաւ և նախագահը ստիպուեցաւ փակել հարցը և մէկ կողմ դնել։ Այս բոլէհս սակայն կիմանամ թէ նոր օրինագիծ մը ևս պիտի երևան բերուի միևնոյն հարցը շօշափող՝ թոյլ անհատի մը կողմէ, որուն կընկերակցի ուրիշ անդամ մը չափահասներու ընդհանուր քուէարկութեան իրաւունքի խնդիրը, որ, յայտնի չէ թէ ինչ արդիւնք պիտի ունենայ։ Հաւանականութիւնը աւելի մերժումի կողմն է, որովհետև կառավարութիւնը տրամադիր չէ այս նիստով յիշեալ խնդիրները ձեռնել, քանի որ աւելի շատ անհրաժեշտ ու ծանրակշիռ հարցեր կան, որ եթէ երևան գան, դաստիարակութեան հարցին նման պիտի գրաւեն երկար ժամանակ ու առիթ տան սուր ու կատաղի վէճերու,—որոնցմէ առաջինն ու գլխաւորը լորդերու ժողովի բարեկարգումն է, իսկ միւսը Իրլանդիայի ինքնավար իշխանութեան նման բան մը տալու խնդիրը,—երկուքն ալ ամենէ հին հարցեր, դեռ Գլադստոնեան ժամանակներէ մնացած։

Միևնոյն ժամանակ կանայք որոշած են կռուիլ, ու կռուիլ բառին իսկական առումով, թէպէտև սա կը խորթացնէ տակաւօրէն իրենց համակիրները, երբ, լրջութեան սահմանէն դուրս ելած, իրենց տրուած համակրանքէն խրախուսուած, դեռ աւչի օրն էր նոր արձակում մը գործեցին պարլամէնտի շէնքին վրա,—գլխաւորաբար Անգլիոյ հիւսիսային կտաւի ֆապրիկաներէն այդ նպատակով բերված 17—20 տարեկան աղջիկներու բանակով, կէտ մը, որ մեծապէս կը զայրացնէ խոհեմ համակիրները, երբ կը տեսնեն, որ մանաւանդ այդ միամիտ աղջիկները սրտակոտոր ճիչեր կընեն «ձերբակալուելու» և «նահատակութեան» ղրկուելու, «դատին» ծառայած լինելու համար։ Երէկ միայն ձերբակալուեցաւ 17 տարեկան այդպիսի աղջիկ մը, որ երբ նախորդ օրուայ դէպքէն, ոստիկանը քանի քանի յորդորներով կը խրատէ տուն երթալ, սա, չը ձերբակալուած հանդիսանալու վախէն բռնուած, կը յարձակի ոստիկանի մը վրա և գլխարկը վար նետելով ու կիցեր տալով,—«Ձերբակալէ զիս, կը պոռայ. ձերբակալուիլ կուզեմ»։

Մէկ պարագայ մը միայն, իրենց անվեհերութիւնը, որ շատ համակրանք վաստակած էր, այսպիսի դէպքերով, որ աւելի մանկական կը յանգին, նուազեցուցին համակիրներու թիւը, մանաւանդ այս ու այն կուսակցութեան կողմը անցնելով, անոնց համակիր ու հակառակ տենչաբանութիւնները ևս սկսան։

Տալու է թէ ոչ կանանց քուէ։ Հարցը կնճռոտ է, մասնաւորապէս անգլիական իգական սեռին վերաբերմամբ։ Պիտի առարկուի թէ արական սեռը ևս նոյնքան անտարբեր է և տգէտ, ու ատոր լաւագոյն ապացոյցը քուէներու խախտումն է այս կամ այն կուսակցութեան կողմը. բայց, ճշմարտութիւնը կը մնայ նոյնը։ Որքան ալ համակիր ու մեծափափաք ցանկացող մը երկու սեռին ևս հաւասար քուէ ունենալու իրաւունքին, պարտ կը զգանք յայտարարել թէ Անգլիոյ խանդավառ կանայք գործը ծուռ ճամբով են սկսած։ Փոխանակ նախ իրենց սեռին մէջ գիտակցութիւն արթնցնելու և հզօր ու ազդու բանակ մը երևան հանելու, առաջին հարուածը ուղղած են արական սեռին դէմ ու անոնց անտարբերութիւնը կը դատապարտեն շարունակ։ Մէկ երկու անդամներ պարլամէնտի, լսելով թէ կանանց քուէ ունենալու խնդիրը պիտի յայտնուի, որպէս հակահարուած, հաւաքեցին ստորագրութիւնները բոլոր այն կանանց, որ համակիր չեն իրենց սեռին քուէ ունենալուն և շաբաթուան մը ընթացքին թիւը հասաւ 38,000-ի, մինչ հակառակ կողմին համար թերևս անհնար ըլլար այդպիսի ստուար թիւ մը ստեղծել։

Լոնդոնի նման վայր մը, քաղցրաբարոյ ու ժպտերես ոստիկաններուն մազեր քաշել, անոնց անկարողութենէն օգուտ քաղելով՝ գնդասեղներով և հովանոցներով վրանին յարձակիլ, հաճելի երևոյթներ չեն համեստ դասին համար և զարմանալի չէ, որ այս պահուս երբ մէկուն «քուէարկուհի» անունը տաս՝ իբրև նախատինք կընդունի, ենթադրելով թէ կին հուլիկանի մը կը նմանցնես զինքը։

Այսու հանդերձ, մենք համակարծիք չենք նոյնպէս անգլիացի «նշանաւոր» հեղինակուհիի մը՝ որ խաւարական ճիչեր կարձակէ բոլոր քուէ պահանջող կանանց դէմ անխտիր ու իր վերջին բրօշիւրը տիտղոսած է «Կի՞ն թէ Քուէարկուհի», որով կը ճգնի ապացուցանել թէ քուէ կուզեն այն կանայք միայն, որ կորուսած են իրենց կանացի յատկութիւնները—հրապոյր, պչրանք, գերադրական ոյժ մարդուն վրա՝ շնորհիւ իգական բնական առաւելութեանց,—մինչ ճշմարիտ կինը, երբ իր կամքը կատարել ուզէ, ի գործ կը դնէ սոյն բացառիկ առանձնաշնորհումները—(այս բոլորը շատ ընտիր բարձրաստիճան ու արքունի իգականութեան համար, բայց ո՞ւր է փաբրիկայի աղջկան այդ առիթները, յայտնի չէ)—կամ, աւելի պարզ լեզուով, կնութեան լաւագոյն տիպերը կը գտնուին գիշերային ռեստորաններ ու այլ համանման հաճոյքի վայրեր, ուր ո՛չ մէկը փոյթ կընէ քուէ ունենալ և տասնեակ քուէ ունեցող լօրտեր ու հողատէրեր իրենց կանացի հրապոյրով զանոնք մարիոնէտներու կը փոխեն։

Բրիտանական գաղթականութիւններէն ոմանց մէջ, ինչպէս Նոր-Զէլանտա, Աւստրալիոյ զանազան գաւառները, այն իրաւունքը տրուած է կանանց քուէարկութեան, բայց, Անգլիոյ նման երկիր մը, որ առաջինը պէտք է համարել Եւրոպիոյ մէջ դէպի այդպիսի սահմանադրական հսկայ յեղափոխիչ քայլը մը, հարկ է սրատեսութիւն, նկատի ունենալով, որ իգական սեռի զօրաւոր մեծամասնութիւնը կը կազմէ բնակչութեան։

Մինաս Ցոլակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 ապրիլի

ԼՕՁ։ Պետրոկօվսկի փողոցում ոստիկանութիւնը երևան հանեց ապօրինի ժողով։ Ձերբակալվեցին 10 հոգի։ Խուզարկութեան ժամանակ ոստիկանութիւնը գտաւ անլեգալ գրուածքներ, էսդեկների կնիքը, անդորրագրեր և այլն։ Ժիդնոյ փողոցում մահացու վիրաւորվել են 2 բանւոր. Պերցի փողոցում պահակախումբը աշխատեց ձերբակալել կասկածաւոր մարդկանց. սրանք փախան, պահակախումբը կրակեց նրանց ետևից, մէկին սպանեց և երեքին վիրաւորեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ Ապրիլի 1-ին պալատի եկեղեցում Պետերբուրգի, Մոսկվայի և Կիևի միտրոպոլիտները կատարեցին հանգուցեալ Գոլիցինի թաղման ծիսակատարութիւնը։ Ներկայ էին պալատի մինիստրը, Պետական խորհրդի անդամները, կայսերական շքախումբը, զօրամասերի օֆիցերները։ Դիակը հողին յանձնվեց Ալեքսանդրո-Նեվսկի տաճարում։

ՍԵՎԱՍՏՕՊՈԼ, 2 ապրիլի։ Ռումբից վիրաւորված գեներալ Նեպլյուևը կատարելապէս առողջանում է։ Շուտով նա կը մեկնէ Կօֆիօ, ուր նա տեղափոխվում է իբրև բերդապահ զօրքի հրամանատար։

ԿԻԵՎ։ Գիշերս երկու 17-ամեայ չարագործներ մորթեցին տանտիկնոջը և սպասաւորուհուն։ Երկուսն էլ ձերբակալված են։

3 ապրիլի

ՄՕՍԿՎԱ, 2 ապրիլի։ Ցերեկվայ ժամը 12-ի մօտերը, Մօսկվա-Կուրսկի երկաթուղու վարչութեան գլխաւոր գանձատնից կառքով փոխադրում էին ստացված 97,000 ր. եկամուտը պետական բանկը։ Երկաթուղային կամուրջից ոչ հեռու կառքի վրա յարձակվեցին, ականատեսների ասելով 25, իսկ ուրիշ տեղեկութիւններով 8 զինված մարդ, խլեցին դրամատարից բանալին և սկսեցին տոպրակներով փողերը զետեղել իրանց կառքի մէջ։ Բարձրացրած հարայ-հրոցի ձայնին օգնութեան շտապեցին պահակատեղիների քաղաքապահները։ Հրացանաձգութեան ժամանակ կողոպտիչները դէն ձգեցին տոպրակները, որով երկու տոպրակներից փողերը ցրիւ եկան փողոցում։ Կողոպտիչների մի խմբակը, որի դէմ դուրս եկան ժանդարմները, վիրաւորեց վախմիստրին։ Կողոպտիչներից մէկը հէնց տեղնուտեղը սպանվեց, միւսը վիրաւորվեց և ձերբակալվեց. ձերբակալվեց և երրորդը. չորրորդ կողոպտիչը կարողացաւ փախուստ դիմել։ Միւս խմբակի մէջ մէկ կողոպտիչ սպանվեց, երկրորդը վիրաւորվեց Սադովայա փողոցի կամուրջի մօտ։ Երկուսը թագնվեցին Միւնիի տանը, մէկին բռնեց Միւնիի հաւատարմատարը, և երևաց որ տեխնիկ-ուսանող է նա. բացատրեց, որ ինքը կողոպտմանը չէ մասնակցել. միւսը թագնվեց վերնայարկում և սկսեց կրակել ոստիկանութեան վրա, ապա անձնատուր եղաւ։ Ընդամենը ձերբակալվեցին 8 հոգի։ Գողացվել են ընդամենը 400 րուբլու չափ։ Բռնվածներից մէկը համալսարանի ուսանող Զագրեաժսկին է, միւսը գործարանատէր Եակէ-Շապշալի որդին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ Գոյութիւն ունեցող երեք րուբլիանոց թղթադրամները նոր ձևի թղթադրամներով փոխարինելը կը կայանայ հաւանօրէն մայիսի 1-ին։

ՎԻԵՆՆԱ, 2 ապրիլի։ Ֆրանց-Յովսէփ կայսրը մինիստր-նախագահի ուղեկցութեամբ մեկնեց Պրագա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ Լօձում կուսակցական հողի վրա կատարվող սպանութիւնները շարունակվում են։

ԽԵՅԼՈՒՏԻԷՆ, 2 ապրիլի։ Խէյլուտցէնի գաւառն են ուղարկված չինական զօրքեր հեռացած ռուսաց զօրքերին փոխարինելու համար։ Մանջուրիայի կառավարութիւնը կը վերակազմվի, երբ վերջնականապէս կը լուծվի զօրքերը բաժանելու հարցը։

ԼՈՆԴՈՆ, 2 ապրիլի։ Րէյտերի գործակալութիւնը հաղորդում է Պեկինից, որ Մանջուրիայից բոլորովին դուրս են եկել ռուսական և ճապոնական զօրքերը, բացի երկաթուղին պաշտպանողներից։ Երկրում վերականգնած է չինական ադմինիստրացիան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ Հրատարակված է ուկազ, ուղղված Սենատին, որի համաձայն Տամբովի նահանգի ուժեղացրած պահպանողութիւնը շարունակվելու է մի տարի ևս։

Համալսարանում սկսվեց իրաւաբանական ֆակուլտէտի համար քննութիւն տւող ուսանողների ցուցակագրութիւնը։ Գրվել են 3500-ից աւելի հոգի։

Պոտսդամում, Համբուրգում, Վիէննայում Տրիէստում սէյսմօգրաֆները նախազգուշակում են ուժեղ երկրաշարժներ երկար տարածութեան վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄ

Իսկական Պարիզի գրամմօֆօն «Золотой Рогъ»—մեխանիզմը իսկական կաղնէ արկղում, բոլոր կողմերը պտտվող ձայնատարով։ Գինը, փոխանակ 75 րուբլու, միայն կարճ ժամանակամիջոցով 17 րուբլի։ Ուղարկում եմ անմիջապէս 5 րուբլի գրաւական ստանալուց յետոյ, մնացածը վերադիր վճարով։ Երկու կողմանի զանազան պլաստինկաներ մեծ քանակութեամբ, գինն է № 1—1 ր. 80 կ., № 2 90-ական կոպէկ։ Հասցէն՝ Б. Райманъ, Варшава, Закрочимская № 1/5։ Մեր ֆիրման տարածելու համար ուղարկում ենք 3 պլատինկա ձրիապէս։ Թղթակցութիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։
(2.) 1—4

ՆՈՐԵԿ

Ինտելիգենտ անձն ծանօթ գրասենեակային գործավարութեան, հաշուապահութեան, գիտէ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, կարող է կառավարել անշարժ գոյքեր և գործարաններ. խնդրում է պաշտօն այստեղ, Բագու կամ Բաթում։ Ունի հաստատուն րեկօմենդացիաներ։ Ռոճիկը կամաւոր։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։ (Հ. ու. Շ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 135—150

Մարտի 25-ին

կայացած Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական ժողովը եկեղեցու երեցփոխի ընտրութեան առիթով որոշեց ծխականների լիակատար ցուցակ կազմելու համար ընտրել յանձնաժողով։ Ծխականները—21 տարեկանից վեր ամենքը, այր ու կին—այսու հրաւիրվում են անձամբ վերահասու լինելու թէ իրանց ազգ ու անուններ մուծված են ծխականների ցուցակի մէջ թէ ոչ և, եթէ չեն մուծված, լրացնել։ Ցուցակը դրված է եկեղեցում մոմավաճառի սեղանի վրա ապրիլի 1-ից մինչև 7-ը։

Ծխականների ցուցակ կազմելու համար ծխական ժողովի կողմից ընտրված յանձնաժողով։
(Կ. Հ.) 2—2

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում		
Փոստատար	1 ժամ 24 ր.	ցերեկվայ
Մարդատար	8 » 5 »	առաւօտեան
»	11 » 8 »	գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու		
Մարդատար	9 ժամ 13 ր.	առաւօտ.
Փոստատար	7 » 48 »	երեկոյեան
Մարդ-ապրանք.	11 » 38 »	»
Թիֆլիսից դէպի Երևան		
Փոստատար	12 ժամ 40 ր.	գիշերվայ

Պ. Եա. Աւագիմովի
ՏՆԿԱՐԱՆԸ
բաց է թողնում արտասահմանի, Ռուսաստանի և տեղական տեսակի
պտղատու ծառեր
էժանացրած գներով
Ст. Скра зак. ж. дор. Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի։
(Հ.) 9—10

Լոյս տեսաւ եւ ծախվում են
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
երկերը երկու հատորի մէջ, հեղինակի պատկերով ինքնաձեռագրով և կենսագրական ակնարկով, բաղկացած 1080 երեսից
Գինն է երկու հատորի համար
3 ՌՈՒԲԼԻ
Գրավաճառներին 20 ο/ο զեղչ
Դիմել՝ Նոր-Նախիջևան, Հայոց Բարեգործական Ընկերութեան գրասենեակը։ Նոյն տեղ ծախվում է նաև Ռափ. Պատկանեանի երկերի III հատորը, գինն է 1 րուբլի։
Ուսանողների, ուսուցիչների, աշակերտների և հոգևորականների համար Միք. Նալբանդեանի երկհատորը արժէ 2 րուբլի, իսկ Ռ. Պատկանեանի երկերի III հատորը—50 կոպէկ, ճանապարհածախսը իրանցը։
2—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1907 թւի ապրիլի ամսի 8-ին, առաւօտեան 12 ժամին, Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում լինելու է հրապարակական աճուրդ վաճառելու դպրոցապատկան երկյարկի տունը, որ կտակել է հանգուցեալ Աբրահամեանը։ Տունը գտնվում է Թիֆլիսի V քաղաքամասում, Հայոց փողոցին կից, Հայոց տուպիկում. գետնի տարածութիւնն է 51,5 քառ. սաժէն։ Աճուրդը սկսվելու է 4100 ր.։ Մանրամասն տեղեկութիւններ կարելի է իմանալ Հոգաբարձական դիւանատնից ամենայն օր, բացի կիրակի և տօն օրերից։
(Ն.Հ.Դ.) 2—3

„Գուտտենբերգ"
Գրախանութում վաճառվում են
Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց 20 կ.։
Տետրակ ասեղնագործութեան, Օսկեանի 2 ր. 50 կոպ.։
Ուսեալ պանդուխտ, Ամիրջանեանի 15 կ.։
Գիւղական բակ (մի մեծադիր պատկեր զանազան գոյներով նկարված) 1 ր. 25 կ.։
Ազգային երգարան գրպանի, տպ. Լօնդօն 50 կ.։
Մոծակ, երգիծաբանական թերթ № 1, 15 կ.։
Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, պրոֆեսոր Թումանեանի 2 ր.։
Ռուսերէն հատընտիր հատուածներ հայերի համար (դասաւանդութեան բացատրութիւններով) կազմեց Ս. Մանդինեան, 55 կոպ.։
Գծագրութեան օրինակներ, մասն գ. Գ. Լեւոնեանի, գունաւոր, 35 կ.։
Քարտէզ Հայաստանի, Վենետիկի տիպ, կտաւի վրա շինված 3 ր.։
Ընդհանուր աշխարհագրութիւն, մ. ա. Յովհաննիսեանի, 50 կ.։
Գրպանի ուղղագրութիւն, Գ. Վանցեանի, 5 կ.։
Պատմական քերականութիւն, Գ. Վանցեանի, 75 կ.։
Ի՞նչ են սովորեցնում սօցիալ-դեմօկրատները, Մենին, 5 կ.։
Ո՞րն է իսկական ներկայացուցչութիւնը, կազմեց Յ. Ս. 2 կ.։
Ընտրութեան օրը Գերմանիայում, Թարգմ. Ա. Պայազատ, 5 կ.։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу. 2—2

Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
լոյս տեսաւ
պատկերազարդ, եռամսեայ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
1907 թ. № 1. (XV գիրք)
Բովանդակութիւն. Հայ ժողովրդական վէպը՝ Մ. Աբեղեանի. Համմուրաբիի օրէնսգիրքը Լ. Բաբայեանի. Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի՝ Կ. Կոստանեանի. Հայոց ժառանգական իրաւունքը՝ Խ. Սամուէլեանի. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ (առանձնապէս Զուարթնոց եկեղեցին) Մեսրովբ վարդապետի. Նախիջևանի ոստիկանական շրջան՝ Ե. Լալայեանի. Նոր-Բայազէտի գաւառ (պեղումներ) Ե. Լալայեանի։ Մի գրոշ. Մատենախօսութիւն. Քաղուածք հայոց Ազգագրական ընկերութեան արձանագրութիւններից։
Գիրքը զարդարված է 25 պատկերներով
Տարեկան բաժանորդագինն է 5 ր., մի գիրքը 1 50 կ. № 2 լոյս կը տեսնի մայիսին։
Դիմել՝ Въ редакцію журнала «Азгаграканъ андесъ», Тифлисъ. 10—10

1907 թ.
„ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ"
ժողովրդական-հասարակական-տնտեսական
շաբաթաթերթ
«Նոր-Աշխատանքը» նուիրված է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրօլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։
«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։
«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան։
«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրւած գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։
ԲԱԺԱՆԵԳԻՆԸ
Ռուսաստանում: Տարին....... 4 ր. Կէս տարին.... 2 ր. 50 կ.
Արտասահմանում: Տարին....... 18 ֆր. Կէս տարին.... 10 ֆր.
Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовскзя № 50.
11—0 ա. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852